

ԻՆՉԻՆ Է ԾԱՌԱՅՈՒՄ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

*Ձեռնարկ հակամարտությունների լուսարանման
մասին դասընթացների անցկացնելու համար*

Սույն ձեռնարկը կազմվել է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) կողմից՝ Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան աջակցությամբ: ԵՀՀ-ն շնորհակալ է բոլոր այն կազմակերպություններին և անհատներին, ում ուղղակի կամ անուղղակի ներդրմամբ հնարավոր դարձավ այս ձեռնարկի ստեղծումը: Առաջին հերթին, երախտապարտ ենք ԵՀՀ հետ համագործակցած այն ուսուցանողներին, ում միջոցով հակամարտությունների լուսաբանման դասընթացներ են անցկացվել տասնյակ լրագրողների համար: Այդ ուսուցանողների թվում են Էլինա Պոդոբեկյանը, Հարություն Մանսուրյանը, Արթուր Պասյանը, Նաիրա Մարտիրոսյանը: Նրանք իրենց խորհուրդներով օգնել են մեզ այս գրքի առանձին բաժինները գրելիս: Ձեռնարկի ստեղծման գործում ներդրում է ունեցել նաև փորձված ուսուցանող Նատալիա Մարտիրոսյանը, ինչպես և մեդիա հետազոտող, «Ռեզիոն» հետազոտական կենտրոնի ղեկավար Լաուրա Բաղդասարյանը: Շնորհակալ ենք մեր բոլոր գործընկերներին գիրքի ստեղծման աշխատանքում ունեցած ներդրման համար:

Եվրասիա համագործակցություն հիմնադրամ
Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանատուն
Հեղինակ՝ Ծովինար Նազարյան,
Խմբագիր՝ Իզաբելլա Մարգարյան
Վերստուգող խմբագիր՝ Գևորգ Տեր-Գաբրիելյան
Տեխնիկական խմբագիր՝ Գայանե Մանվելյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
Նպատակ.....	7
«ԹՇՆԱՄՈՒ ԿԵՐՊԱՐ».....	10
Պարապմունքի նպատակը	11
Առաջին մասի ենթաթեմաները.....	12
I. Բացասական և դրական կարծրատիպեր.....	12
II. «Թշնամու կերպարը».....	16
III. Մամուլը և «թշնամու կերպարը».....	20
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ	24
Պարապմունքի նպատակը	25
Երկրորդ մասի ենթաթեմաները.....	26
I. «Իմ ճշմարտությունը».....	26
II. Հակամարտություններ.....	30
III. «Թշնամուն» լուսաբանելիս.....	33
ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ԷԹԻԿԱ.....	37
Պարապմունքի նպատակը	40
Երրորդ մասի ենթաթեմաները.....	40
I. Լրագրողական էթիկա	40
II. Էթիկայի կոդեքս	45
ՈՐՊԵՍ ԱՄՓՈՓՈՒՄ	49
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	50
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	51
Հավելված 1. Բառարան.....	51
Հավելված 2. Հապավումներ.....	52
Հավելված 3. Ֆիլմեր	53
Հավելված 4. Բաժանվող նյութեր	53
Հավելված 5. Առաջարկվող օրակարգ	54
Հավելված 6. Դասընթացի գնահատման թերթիկ.....	55

Executive Summary

This manual aims at training journalists in professional and credible coverage of conflicts. It is a result of several years of Eurasia Partnership Foundation's (EPF) confidence-building work with journalists, media professionals, and bloggers from Armenia and Azerbaijan. The manual delivers a message that peace journalism means first of all adherence to professionalism and humanistic values, and that journalistic ethics should not be adversely affected by the fact of the conflict. The manual is a toolkit which can be used for training journalists from conflict sides. It includes methodical guidance, instructions, examples and training materials, as well as links to them. The manual's Armenian version targets the Armenian media society, but can be useful for other settings, too, particularly for joint Armenian-Azerbaijani mixed group trainings. EPF believes that the manual will be used by teachers and trainers of journalism who care for the professionalism of media, particularly with respect to such an important and sensitive area of specialization as conflict reporting. At the same time, the manual aims at a larger audience. Its message transcends the media specialism and is directed to anybody who studies the conflict, writes about it, works on its resolution or transformation, or thinks about it: the message of the manual is that ethical thinking is needed while addressing the conflict from any perspective.

4

The implementation of the projects which became the basis for this manual, and of the manual itself have become possible thanks to the support of several donors. A major part of targeted support has been provided by the Conflict Prevention Pool of the United Kingdom, additional support has been provided by USAID, the Government of Finland, and SIDA. EPF also expresses its gratitude to several resource people, among them Arthur Papyan, Naira Martikyan, Elina Poghosbekyan, Boris Navasardyan, Harutyun Mansuryan, Gegham Vardanyan, Natalia Martirosyan, and Laura Baghdasaryan. Particular thanks to Azerbaijani partners Suhelya Jafarova, Pervana Mammadova, Ilaha Rasulova, Jamal Shakhverdiev, Naila Hashimova, Avaz Hasanov, Shahin Rzaev, Arif Aliev, Naila Alieva and Ilham Safarov. We are also very thankful to British experts Elisabeth Robson and Iain Elliot for their help in development of methodology and selection of materials.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լրատվամիջոցներն այն միջնորդներն են, որոնց շնորհիվ հասարակության տարբեր շերտեր և խմբեր տեղեկություններ են ստանում միմյանց մասին և լսելի են դարձնում իրենց ձայնը լայն հասարակությանը: Հասարակության կողմից այս կամ այն խնդրի ընկալումը մեծապես կախված է լրատվամիջոցների անաչառությունից և բարեխղճությունից: Լրատվամիջոցների ազդեցությունն առանձնակի մեծ է հատկապես այն դեպքերում, երբ հասարակությունը տեղեկատվության այլընտրանքային աղբյուրներ չունի:

Ղարաբաղյան հակամարտության բռնկումից ի վեր Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանը փակ է. այն վերածվել է հակամարտության «շփման գծի», որտեղ դեռևս կրակոցներ են հնչում, և որի երկու կողմերում դեռևս զինվորներ են զոհվում: Երկու ազգերի միջև շփումներ գրեթե չկան կամ միջնորդավորված են. միջնորդավորված է տեղեկությունների փոխանակումը, հազվադեպ են հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների ներկայացուցիչների հանդիպումները, հազվագյուտ են ակնաստեսների վկայությունները հարևան երկրի մասին:

«Ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» իրավիճակում գտնվող երկու երկրների առողջ ուժերը փորձում են նպաստել խաղաղության հաստատմանը, սակայն հասարակության մեջ հնչող ռազմատենչ մտեցումները շարունակում են երկու ժո-

ղովորդների մեջ միմյանց նկատմամբ այլատյացություն և անհանդուրժողականություն սերմանել: Նույնիսկ հարևան երկրից կենցաղային մի դեպք կամ իրավիճակ ներկայացնելիս՝ լրատվամիջոցները հաճախ դիմում են էթիկայի կանոնների անթույլատրելի խախտումների, խեղաթուրում են իրականությունը՝ փորձելով միմյանց նվաստացնել, օգտագործելով տարատեսակ բացասական կարծրատիպեր և կլիշեներ: Այնինչ բարեխիղճ լրագրողներից ու փորձագետներից պահանջվում է տեղեկություններ հավաքելիս օգտվել *սուսջնային*, ստուգված աղբյուրներից և ձգտել ժողովրդին ներկայացնել իրականությունն իր դրական և բացասական կողմերով: Նման բարդ և պատասխանատու խնդիրներ լուսաբանելիս, շատ էական է լրագրողի պրոֆեսիոնալ, պարտաճանաչ և հնարավորինս օբյեկտիվ մոտեցումը:

«Թշնամական» լուսաբանումը բնորոշ է գրեթե բոլոր հակամարտություններին: Այս թեման բավականին հետազոտված է և շարունակում է հետազոտվել շատ երկրներում: Ծագումով արաբ՝ ամերիկացի հայտնի փիլիսոփա Էդվարդ Սաիդը նկատել է, որ գիտությունն ու մամուլը հաճախ մասնակից են դառնում պետական քարոզչությանը, սակայն նրանց մի մասը դա անում է գրագետ կերպով, իսկ մյուս մասը նեղություն չի կրում լրացուցիչ տեղեկություններով հիմնավորելու սեփական վերլուծությունները: Ըստ Սաիդի, «հեռավոր մշակույթի» ճանաչումը հնարավոր է, երբ այն մեկնաբանվում է **հումանիստորեն**, ինչն սկսվում է «մեկնաբանողի նախապաշարմունքների մասին իրազեկությունից, մեկնաբանվող տեքստից մեկնաբանողի օտարումից և այլն» (Said, 1997): Այս դիտարկումը կիրառելի է նաև հայերի և ադրբեջանցիների միջև հարաբերությունների համատեքստում:

Մույն ձեռնարկում բերված են այլ հակամարտությունների լուսաբանման օրինակներ, սակայն ձեռնարկը նախևառաջ նվիրված է լրատվամիջոցների դերին հայ-ադրբեջանական հարաբերություններում:

Եվրասիա համագործակցություն հիմնադրամը (ԵՀՀ) 2009 թվականից իրականացնում է հակամարտությունների լուսաբանման սկզբունքների և չափանիշերի վերաբերյալ ուսուցողական ծրագիր, որում ներկա դրությամբ ընդգրկված են ավելի քան 200 լրագրողներ: Հայաստանից ծրագրի իրականացմանը մասնակցել է հինգ ուսուցանող ԵՀՀ գործընկեր կազմակերպություններ Երևանի մամուլի ակումբից և Մեդիա նախաձեռնությունների կենտրոն (նախկին «Ինտերնյուս» Հայաստան) ՀԿ-ից: Ադրբեջանից նախագծի իրականացմանը և, մասնավորապես, ուսուցողական ծրագրի մշակմանը աջակցել են «Ինտերնյուս» Ադրբեջանը և «Յենի նեսիլ» լրագրողների ընկերակցությունը:

Ձեռնարկը կազմվել է իրականացված ծրագրերի կուտակած փորձի հիման վրա:

Նպատակը

Ձեռնարկը հասցեագրված է հակամարտությունների պրոֆեսիոնալ և անաչառ լուսաբանում ուսուցանողներին և նպատակ ունի ապահովել նրանց պարապմունքների համար անհրաժեշտ տեղեկություններով և խորհուրդներով: Պարապմունքների արդյունքում մասնակից լրագրողները պետք է ամրապնդեն իրենց գիտելիքները և էթիկական ընկալումները հակամարտությունների լուսաբանման սկզբունքների և չափանիշերի վերաբերյալ: Դասընթացը կնպաստի փաստերի օբյեկտիվ լուսաբանման հմտությունների արմատավորմանը, ինչն իր հերթին դրականորեն կազդի երկու ժողովուրդների փոխճանաչողության վրա:

7

Մեր ձեռնարկը պարունակում է օգտակար տեղեկություններ հակամարտությունների լուսաբանման վերաբերյալ, լուսաբանման օրինակներ, լրագրողական էթիկային առնչվող կանոններ, վավերագրական ֆիլմեր, Power Point պրեզենտացիաներ (այսուհետ՝ PPT մատուցում) և ինտերակտիվ ուսուցման եղանակներ:

Ձեռնարկը կազմված է այնպես, որ հնարավորինս ամբողջական կերպով ներկայացնի պարապմունքների համար անհրաժեշտ հնարքներն ու օժանդակ նյութերը: Այն կարող է օգտագործվել ամբողջապես կամ մասնակիորեն. ուսուցանողը, ըստ ցանկության կամ կարիքի, կարող է ընտրել առանձին թեմաներ:

Ձեռնարկը բաղկացած է երեք բաժնից՝ «Թշնամու» կերպարը», «Հակամարտությունների լուսաբանումը» և «Մեդիայի էթիկա»: Յուրաքանչյուր ենթաբաժնում «Ի գիտություն» խորագրի ներքո տրված են ուսուցանողի համար անհրաժեշտ տեղեկություններ և ուղեցույց՝ պարապմունքը վարելու համար:

Նախատեսված են նաև վարժություններ և խաղեր, որոնց նպատակն է ուսանողների մասնակցությամբ հարցեր առաջ քաշել և քննարկել դրանք: Ձեռնարկին կցված են նաև օժանդակ նյութեր՝ էթիկական կանոններ, ֆիլմեր և լուսաբանման օրինակներ՝ պարապմունքների ընթացքում քննարկելու համար: Ուսուցանողները կարող են լրացուցիչ նյութեր գտնել օգտագործված գրականության ցանկում:

Ձեռնարկի ներածական մասում ներկայացված են ընդհանուր խորհուրդներ ուսուցման ձևերի և ուսուցողական նյութերի կիրառման վերաբերյալ: Ձեռնարկում օգտագործված մասնագիտական եզրերի և հասարակական քառաբանները տրված են համապատասխան հավելվածներում (Հավելվածներ 1 և 2):

Ձեռնարկում ներկայացված յուրաքանչյուր բաժին նախատեսված է մեկուկեսից երկու ժամանոց պարապմունքի համար. ողջ սեմինարի համար կպահանջվի երկուսուկես օր: Գերադասելի է սեմինարն անցկացնել ըստ ձեռնարկում նշված հերթականության: Դա մասնակիցներին կօգնի ավելի լավ ըմբռնելու հակամարտությունների լուսաբանման սկզբունքներն ու չափանիշերը:

Ընտրովի թեմատիկ դասընթացներ անցկացնելու պարագայում խորհուրդ է

տրվում չսահմանափակվել միայն տվյալ բաժնով, այլ օգտագործել թեմային վերաբերող այն ամենը, ինչ կարելի է գտնել ձեռնարկում:

Այս դասընթացը նախատեսվում է հակամարտություններ լուսաբանող լրագրողների, լրագրողի մասնագիտություն ստացող ուսանողների, թեմայով հետաքրքրվող բլոգերների համար: Այն կարելի է անցկացնել ինչպես միատարր, այնպես և խառն ազգային կազմ ունեցող լրագրողների խմբերի հետ: Երկու դեպքում էլ պարապմունքները պետք է ընթանան կոռեկտ և հարգալից մթնոլորտում:

Ուսուցանողին խորհուրդ է տրվում որդեգրել դասընթացը վարելու մասնակցային-հարցադրումային մեթոդը, որը 1980-ականներին առաջ է քաշել բրազիլացի մանկավարժ Պաուլո Ֆրեյրին (Freire, 2010): Այս մեթոդի կիրառման պարագայում ուսուցանողը մոդերատորի դերում է. նա խրախուսում է մասնակիցներին հարցեր տալ՝ այսպիսով բոլորին մասնակից դարձնելով դասի ընթացքին, խթանում է քննարկումներն ու ինքնուրույն եզրահանգումները: Ուսուցանողը իր մոտեցումները չի պարտադրում լսարանին, չի փորձում սովորեցնել, այլ ձգտում է տեղեկացնել: Այլ կերպ ասած՝ ցանկալի է, որ ուսուցանողն աշխատի լրագրողների *հետ*, այլ ոչ թե լրագրողների *համար*:

Հաշվի առնելով, որ թեման բավականին նուրբ է, ուսուցանողը պետք է համբերատար և հանդուրժող լինի, հոգա, որպեսզի բոլոր կարծիքները հնչեն առանց իր կամ լսարանի կողմից անհարկի ընդհատումների, որպեսզի արտահայտված մտքերը լինեն կոռեկտության սահմաններում և չվիրավորեն մասնակիցների զգացմունքները:

Դասընթացի սկզբում մասնակիցներն առաջարկում են սահմանել բոլորի համար ընդունելի վարքի կանոններ, ինչպես օրինակ՝ «Լսել խոսողին», «Հարգել միմյանց կարծիքը», «Լինել ակտիվ»: Այդ առաջարկությունները գրի են առնվում և փակցվում պատին: Դասընթացի սկզբում բոլոր մասնակիցները ծանոթանում են միմյանց հետ՝ կամ մեկ առ մեկ ներկայանալով, կամ էլ մեկը մյուսի հետ կարճատև զրույցից հետո միմյանց ներկայացնելով:

Պարապմունքները վարելիս ուսուցանողին խորհուրդ է տրվում լսարանին ներկայացնել ընդհանուր տեղեկություններ տվյալ թեմայի վերաբերյալ. դրանք տրված են տվյալ պարապմունքին վերաբերող բաժնում, ինչպես և տվյալ գլխի ներածական մասում:

Շատ կարևոր է ճիշտ համամասնություն պահպանել դասընթացի տեսական և գործնական մասերի միջև: Ուսուցանողներին խորհուրդ է տրվում խոսքը հագեցնել հայաստանյան և միջազգային օրինակներով, քննարկումների և հարց ու պատասխանի միջոցով հնարավորություն տալ մասնակիցներին կարծիքներ արտահայտել, ինչպես նաև՝ ձեռնարկում ներկայացված բազմազան վարժությունների, գործնական առաջադրանքների ու խաղերի կիրառմամբ՝ ինտերակտիվ կերպով մատուցել նյութը:

Մամուլի հրապարակումների և ֆիլմերի քննարկումների ընթացքում ուսուցանողը չի պնդում իր կարծիքներն ու համոզմունքները, այլ հնարավորություն է ստեղծում մասնակիցների համար՝ արտահայտելու և զարգացնելու իրենց դիտարկումներն ու տեսակետները՝ իր կողմից հարցեր առաջադրելով և քննարկվող խնդրին առնչվող տեղեկություններ հավելելով, այնպես, որպեսզի մասնակիցներն ինքնուրույն մտածելով հանգեն իրենց սեփական եզրակացություններին:

Կարելի է առանձին ուսուցողական նյութեր փոխարինել նորերով՝ պահպանելով դրանց մատուցման սկզբունքները: Ձեռնարկում և դրա հավելվածներում ներկայացված նյութերը, ինչպես նաև լրացուցիչ գրականություն կարելի է ձեռք բերել Եվրասիա համագործակցություն հիմնադրամի գրասենյակում: Նյութեր կարող են տրամադրել նաև Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը և Երևանի մամուլի ակումբը:

Պարապմունքների ընթացքում ուսուցանողը պիտի աչքի առաջ ունենա այս դասընթացների գլխավոր նպատակը. այն է՝ մասնակիցների համար հասկանալի և ընդունելի դարձնել հակամարտությունների պրոֆեսիոնալ լուսաբանման սկզբունքներն ու չափանիշերը:

Ձեռնարկը կարող է օգտագործվել նաև հակամարտությունների լուծմանը նվիրված պարապմունքների ժամանակ, քանի որ շոշափում է հարցեր, որոնք ավելի լայն ընդգրկում ունեն, քան սուկ լրատվամիջոցների մասնագիտական կարիքները:

«ԹՇՆԱՄՈՒ ԿԵՐՊԱՐ»

Լրագրողական էթիկայի և հակամարտությունների անաչառ լուսաբանման համատեքստում կարևոր է անդրադարձ կատարել *«թշնամու կերպար»* հասկացությանը, քանի որ այն թե՛ պետությունների, և թե՛ լրատվամիջոցների կողմից հաճախ շահարկվող հոռետրական միջոց է: Պետության ղեկավարությունը դիմում է այս քարոզչական հնարքին արտաքին քաղաքականությունն արդարացնելու և հանրային աջակցություն ստանալու նպատակով: Այդ հնարքը վտանգավոր է ոչ միայն «թշնամու»՝ հակառակորդ կողմի, այլև՝ սեփական քաղաքացիների համար, որովհետև միտված է ազդելու նրանց ինքնուրույն մտածելու ունակության վրա: Ժողովրդի որոշ մասը ենթարկվում է քարոզչական հնարքների և կասկածի տակ է դնում իր այն համաքաղաքացիների հայրենասիրությունն ու պետությանը նվիրվածությունը, ովքեր «հանդգնում են» այլ կերպ մտածել:

Որպես կանոն, մարդկանց գիտակցության մեջ «թշնամու կերպարի» ձևավորման և արմատավորման համար ասպարեզ են հանվում ինչպես տվյալ հասարակության պատմական հիշողության մեջ գոյություն ունեցող վաղեմի, այնպես էլ համեմատաբար նոր ձևավորված բացասական *կարծրատիպեր* հակառակորդ կողմի մասին: Դրանք, որպես կանոն, ընդհանուր բացասական գծեր են վերագրում մի ամբողջ հանրությանը. ազգամիջյան հակամարտությունների դեպքում՝ մի ամբողջ էթնոսի, միջպետական հակամարտությունների դեպքում՝ մի ամբողջ երկրի, և այդպես շարունակ: Բացասական կարծրատիպերը նպաստում են «թշնամու կերպարի» ձևավորմանը՝ հակառակորդ կողմի ներկայացուցչին ապամարդկայնացնե-

լով, նրան պատկերելով որպես մարդկայնության դրսևորումներից գուրկ, ստոր և նվաստ մի էակի: Այդ կարծրատիպերը տարածվում են ողջ հանրույթի վրա և ստեղծում այնպիսի տպավորություն, թե իբր ամբողջ հանրույթն է այդպիսին: «Թշնամու կերպարի» ֆենոմենը անտեսում կամ մերժում է հակառակորդ կողմում գոյություն ունեցող դրական դրսևորումները և հենվում է միայն բացասականի վրա:

«Թշնամու կերպարի» ձևավորման տեխնոլոգիան սեփական գործողությունները ներկայացնում է որպես մեծագործություններ՝ դրանք հակադրելով հակառակորդի գործողություններին, որոնք ներկայացվում են որպես ձախողումներ և անմարդկայնության դրսևորումներ:

Շատ պետություններ իրենց արտաքին քաղաքական քարոզչությունը կառուցում են «թշնամու կերպարի» վրա, ինչը հնարավորություն է տալիս սեփական երկրի ներսում համախմբված և կառավարելի պահել հասարակությունը՝ նաև ներքին քաղաքականության և ռեսուրսների բաշխման հարցերի վերաբերյալ:

Լրատվամիջոցները հաճախ լծվում են քարոզչական մեքենային՝ որդեգրելով պետական քարոզչության եղանակները: Ավելին, պետական քարոզչության նշանակալի մասն իրականացվում է հենց լրատվամիջոցների միջոցով և առանց վերջիններիս՝ դժվար թե այդքան մեծ ազդեցություն ունենար լայն հասարակության վրա:

Քարոզչությունն, անշուշտ, հակամարտությունը լուսաբանելու բավականին հեշտ, բայց ոչ պրոֆեսիոնալ ճանապարհ է: Այն չի պահանջում լուսաբանման լեզվի (բառապաշարի, տերմինաբանության) ընտրություն, աղբյուրների ստուգում և համեմատում, այլ ընտրանքային աղբյուրների որոնում, ականատեսների վկայությունների լուսաբանում և այլ անհրաժեշտ աշխատանք: Մրան նպաստում է նաև այն հանգամանքը, որ հակամարտող կողմերի համար դժվար մատչելի են լինում մյուս կողմի *առաջնային աղբյուրները*, իսկ հասանելի *երկրորդային աղբյուրների* դերում հաճախ հանդես են գալիս այնպիսի լրատվամիջոցներ, որոնք իրենց հերթին լծված են սեփական պետության քարոզչության գործին: Արդյունքում երկու կողմերը հակառակ կողմում ամենից հաճախ տեսնում են ատելություն իրենց երկրի նկատմամբ և փոխադարձում են է՛լ ավելի մեծ ուժով՝ անտեսելով սեփական երկրի ողջամիտ և խաղաղությանն ուղղված ձայները: Այդ ձայները, հետևաբար, անլսելի են մնում նաև հակառակ կողմի համար:

Լրատվամիջոցները կարող են նպաստել ինչպես «թշնամու կերպարի» արմատավորմանը, այնպես և խաղաղության ամրապնդմանը: Եվ եթե առաջինն արվում է բացառապես քարոզչության շրջանակներում, ապա երկրորդն այն է, ինչ պահանջում է բարեխիղճ լրագրությունը. անաչառ լրատվություն և մարդակենտրոն մեկնաբանություն:

Պարապմունքի նպատակը

«Թշնամու կերպարը» առանցքային դեր է խաղում հակամարտությունների լու-

սաբանման գործում: Մեմինար պարապմունքն այս երևույթի վերլուծությանը սկսելու նպատակը հակամարտությունների բարեխիղճ լուսաբանման խոչընդոտների հաղթահարման ուղիների վերհանումն է: Պարապմունքի ընթացքում մասնակիցները կժանոթանան «թշնամու կերպարի» շահարկմանը քարոզչական տեխնոլոգիաներում ու լրագրողական աշխատանքում և կվիորձեն տեսնել հակամարտությունների լուսաբանման հնարավորություններն առանց նման շահարկումների:

Առաջին մասի ենթաթեմաները

«Թշնամու կերպարի» երևույթը սպառնիչ կերպով վերլուծելու համար նախատեսվում են թեմային առնչվող երեք ենթաթեմաներ՝

- «Բացասական և դրական կարծրատիպեր»,
- «Թշնամու կերպարը»,
- «Մամուլը և «թշնամու կերպարը»:

I. Բացասական և դրական կարծրատիպեր

Առաջարկվում է պարապմունքը սկսել *կարծրատիպերի* շուրջ ինտերակտիվ քննարկումով, որը նպատակ ունի մասնակիցներին սկզբից ևեթ ներգրավել աշխատանքային պրոցեսի մեջ հանրամատչելի մի թեմայի միջոցով, որը կարող է նաև հումորի և աշխուժության մթնոլորտ ստեղծել սեմինարի սկզբում՝ մասնակիցներին նախապատրաստելով գլխավոր խնդրի՝ հակամարտությունների լուսաբանման մեջ «թշնամու կերպարի» մասին լրջագույն քննարկմանը:

Պարապմունքի առաջարկվող կառուցվածքը.		
Տևողությունը՝ 60 րոպե		
Անհրաժեշտ պիտույքներ՝ թուղթ, մարկերներ		
1	«Այդ անտանելի հայերը/ադրբեջանցիները» վարժություն խմբերում	15 րոպե
2	Վարժության արդյունքների ներկայացում	15 րոպե
3	Քննարկում և ամփոփում	30 րոպե

Ի գիտություն

Ըստ ընդունված սահմանումներից մեկի՝ կարծրատիպը որևէ առարկայի (երևույթի, գործընթացի)՝ սովորաբար վառ զգացական գույներով հագեցած, ստանդարտացված, սխեմատիզացված, պարզեցված և տափակեցված պատկեր է. բնութագրվում է նշանակալի կայունությամբ, թեև կառուցվում է սովյալ առարկայի (երևույթի, գործընթացի) միայն մասնակի, հաճախ՝ գոյություն չունեցող հատկանիշերի վրա: Երբեմն սահմանվում է որպես ոչ ճշգրիտ, իռացիոնալ, չափազանց ընդհանրացված պատկերացում: Լայն իմաստով՝ մտքի, ըմբռնման, վարքի ավանդական կանոն է, վարքի շարժումը:

Կարծրատիպերը կարող են լինել ինչպես բացասական, այնպես և դրական: Օրինակ՝ սևամորթերի մասին բացասական կարծրատիպերից է, թե իբր նրանք բոլորը ծույլ են, իսկ դրական՝ թե նրանք բոլորը արտակարգ երաժշտական ունակություններ ունեն: Սակայն այդ կարծրատիպերը, որպես կանոն, սասանվում են, երբ դրանց հավատացողը հանդիպում է չափազանց աշխատասեր կամ չափազանց «բաղաձայն» սևամորթի:

Համաձայն արդի գիտական մոտեցումներից մեկի, կարծրատիպերը կազմավորվում են հանրային նույնականացումից և դրանից բխող հավաքական վարքից և ընկալումներից (Haslam, 1997): Հանրույթը կամ խումբը կոնսենսուսային համաձայնության է գալիս ինչպես իր ներսում, այնպես էլ իրենից դուրս տեղի ունեցող երևույթները

բնորոշելու նշանային համակարգերի շուրջ՝ կախված սեփական ինքնասուսանականացումից:

Օրինակ, «թուրքը մնում է թուրք» այլատյաց կարծրատիպը մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, որ հայերի հավաքական հիշողության մեջ մեծ տեղ ունի հայերի 1915թ.-ի ցեղասպանության պատմական փաստը և թուրքը՝ որպես թշնամու կերպար: Դրա վկայությունն է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի օժանդակությամբ Գրիգոր Երիցյանի իրականացված հետազոտությունը, որտեղ Հայաստանի և Թուրքիայի երիտասարդները խոստովանել են, որ մինչև միայնց հետ հանդիպելը, իրենք բազմաթիվ նման կարծրատիպեր են ունեցել (Yeritsyan, 2012):

Նմանատիպ հետազոտություններ կատարվել են նաև հայերի և ադրբեջանցիների միջև առկա կարծրատիպերի վերաբերյալ: Երևանի մամուլի ակումբը (ԵՄԱ) և ադրբեջանական «Ենի նեսիլ» լրագրողական ընկերությունը տարիներ շարունակ հետազոտել են երկու երկրների լրատվամիջոցներում շրջանառվող կարծրատիպերը և կլիշեները: 2002-2003 թվականներին նմանատիպ հետազոտություն իրականացվել է Հայաստան, Ադրբեջան, Թուրքիա ձևաչափով: Ուսումնասիրություններին կարելի է ծանոթանալ ԵՄԱ կայքում:¹

Երևանի մամուլի ակումբի և ադրբեջանական «Ենի նեսիլ» լրագրողական ընկերակցության համատեղ մեկ այլ հետազոտությունն անդրադառ-

¹ http://www.ypc.am/media_research/In/ru

նում է առցանց լրատվամիջոցներում դարաբաղյան հակամարտության լուսաբանման ընթացքում կիրառված կլիշեներին և բացասական կարծրատիպերին: Հետազոտությունն օգտակար աղբյուր է այս ձեռնարկով նախատեսված պարապմունքներն անցկացնելու համար: Պետք է, սակայն, նկատի ունենալ, որ հակամարտության առկայությունն ազդում է մամուլի հրապարակումների վրա նաև այն դեպքերում, երբ հարևանի մասին լուսաբանումը չի առնչվում բուն դարաբաղյան հակամարտությանը:

Կարծրատիպերի համար պարարտ հող է ստեղծում նաև առաջնային աղբյուրների և հավաստի տեղեկությունների աղբյուրները, ինչի ապացույցն էր «Ռեգիոն» հետազոտական կենտրոնի կողմից 2004-ին իրականացրած հետազոտությունը, համաձայն որի հայերն ու ադրբեջանցիները միմյանց գնահատում են ավելի շատ ըստ կարծրատիպերի, քան ըստ սեփական փորձի: Երկու կողմն էլ հարևան ժողովրդին վերագրել են ծայրահեղ բացասական բնութագրիչներ: Հայերը ադրբեջանցիներին գնահատել են որպես «խորամանակ, նենգ, չար, երեսպաշտ, ագրեսիվ, հանդուգն, ռազմատենչ, ազգայնամոլ, ծույլ», իսկ որպես դրական հատկանիշեր նշել են նրանց

«հյուրասիրությունը, հայրենասիրությունը, խելքը, աշխատասիրությունը» և այլն: Ադրբեջանցիները նույնպես ծայրահեղ բացասական են գնահատել իրենց հարևաններին. նրանց կարծիքով հայերը «խորամանկ են, ազգայնամոլ, երեսպաշտ, հանդուգն և ագրեսիվ»: Հայերին վերագրվող դրական գնահատականներից են եղել «աշխատասիրությունը, խելքը, հյուրասիրությունը և խիզախությունը»: Երկու կողմերում էլ միմյանց դրական են գնահատել հարցվողների շատ փոքր մասը: Ուշագրավ է, որ **որքան երիտասարդ են եղել հարցվողները, այնքան ավելի բացասական են գնահատել հարևանին**, իսկ համեմատաբար հասուն տարիքի մարդիկ, ովքեր ժամանակին հարևան ժողովրդի ներկայացուցիչների հետ ապրելու, աշխատելու, շփվելու փորձ են ունեցել ավելի զգուշավոր են եղել իրենց գնահատականներում (Армения и Азербайджан на перепутье “ни мира, ни войны”: Как преодолеть стереотипы, 2005): Սա մեկ անգամ ևս ապացուցում է, որ կարծրատիպերը, նախապաշարմունքներն ու կլիշեներն առաջանում են տեղեկությունների առաջնային աղբյուրների բացակայության պայմաններում: Նման կարծրատիպերը կարող են ի հայտ բերվել նաև պարապմունքների մասնակիցների օգնությամբ:

Ուսուցանողի ուղեցույց

Նկատի ունենալով, որ սա սեմինար պարապմունքի սկիզբն է, ուսուցանողը պիտի ստեղծի անմիջական քննարկման ազատ մթնոլորտ՝ մասնակիցներին առաջարկելով ազատորեն արտահայտել իրենց մտքերն ու կարծիքները՝ պահպանելով

փոխադարձ հարգանքի և քաղաքավարության կանոնները: Ուսուցանողը պիտի հետևի նաև, որ մասնակիցները գերծ մասն ադրբեջանցիների հասցեին վիրավորական արտահայտություններից, եթե նույնիսկ նրանք ներկա չեն լսարանում: Սակայն առաջին նիստում պիտի առաջարկվի խոսել նաև իրենց ծանոթ այդպիսի արտահայտությունների մասին:

1. «Այդ անտանելի հայերը/ադրբեջանցիները» վարժությունը խմբերում

Նախ, ուսուցանողը մի քանի բույսերից ներածականով մեկնաբանում է «կարծրատիպ» հասկացությունը՝ ընդգծելով, որ այն կարող է լինել դրական և բացասական:

Այնուհետև ուսուցանողն առաջարկում է պարապմունքի մասնակիցներին բաժանվել երեք կամ չորս խմբի: Խմբերին տրամադրվում է երկուական թերթ թուղթ և մարկերներ: Նրանց առաջարկվում է մի թղթի վրա երկու սյունակով գրել հայերի մասին իրենց հայտնի դրական և բացասական կարծրատիպերը, իսկ մյուս թղթի վրա՝ ադրբեջանցիների մասին: Դա անելու համար մասնակիցներին տրվում է 15 րոպե, որից հետո նրանց առաջարկվում է ներկայացնել գրի առած կարծրատիպերը:

2. Վարժության արդյունքների ներկայացում

Յուրաքանչյուր խմբից մեկ կամ երկու հոգի ներկայացնում է իր խմբում կատարված աշխատանքը: Հերթով յուրաքանչյուր խումբ պատին փակցնում է իր կազմած երկու աղյուսակները և ցույց տալիս մասնակիցներին, թե ինչ եզրակացությունների է հանգել իրենց խումբը:

3. Քննարկում և ամփոփում

Խմբում կատարված աշխատանքը ներկայացնելուց հետո ուսուցանողը մասնակիցների օգնությամբ ընդգծում է այն կարծրատիպերը, որոնք ամենից շատ են հիշատակվել խմբերի ներկայացրած ցանկերում և առաջարկում է մասնակիցներին քննարկել, թե որքանով են դրանք համապատասխանում իրականությանը:

Ուսուցանողին խորհուրդ է տրվում խմբերի աշխատանքն ամփոփելիս և քննարկելիս, ուշադրություն դարձնել, թե որ ազգի/երկրի դեպքում ո՛ր կարծրատիպերն են գերակշռել՝ դրական և թե՛ բացասական, և առաջարկել խոսել այդ մասին:

Որոշ դեպքերում մասնակիցները կարող են վիճելի գնահատական տալ կարծրատիպերին. ասենք՝ հայերի «խորամանկության» մասին կարծրատիպը գնահատել դրական կամ բացասական: Հարկավոր է այս դեպքում հարցադրումների միջոցով մասնակիցներին մղել իրենց մտեցումների մասին նորովի քննարկման:

Քննարկման փուլում հարկավոր է ուշադրություն դարձնել նաև, թե արդյոք նշվել են կարծրատիպեր, որոնք վերագրվել են և՛ հայերին, և՛ ադրբեջանցիներին: Եթե չկան այդպիսիք, ուսուցանողը կարող է հարցադրում անել այդ մասին և դրա շուրջ քննարկում ծավալել:

Քննարկման ավարտին ուսուցանողը մասնակիցների կարծիքներն ամփոփում է՝ ի հայտ բերելով դրանցում մատնանշված այն տարբերություններն ու նմանությունները, որոնք, մասնակիցների կարծիքով, առկա են հայ և ադրբեջանցի ժողովուրդների միջև:

II. «ԹՇՆԱՄՈՒ ԿԵՐԱՅԱՐԸ»

Ուսումնասիրելով տարբեր երկրների, այդ թվում՝ Հայաստանի և Ադրբեջանի փորձը, պարապմունքի մասնակիցները վերլուծում են «թշնամու կերպար» հասկացությունը, դրա ձևավորման և կիրառման ձևերը և ազդեցությունը հասարակության վրա: Մեմինար պարապմունքի նպատակն է՝ մասնակիցներին մտածելու նյութ տալ այն մասին, թե ինչ հետևանքներ կարող են ունենալ մի ամբողջ հավաքականության նկատմամբ բացասական կարծրատիպերի կիրառումը և թշնամական առասպելների տարածումը:

Պարապմունքի առաջարկվող կառուցվածքը.

Տևողությունը՝ 120 րոպե:

Պիտույքներ՝ լսափռոփ, պրոյեկտոր, թուղթ և մարկերներ, հոդվածների նմուշներ 3-4 խմբի համար:

1	«Խաղաղության և պատերազմի միջև» ֆիլմի դիտում և քննարկում	60 րոպե
2	Վարժություն «Թերթեր»	15 րոպե
3	Վարժության արդյունքների ամփոփում	30 րոպե
4	Քննարկում	30 րոպե

Ի գիտություն

Հետազոտողները նշում են, որ «թշնամու կերպարը» զարգացվում և շահարկվում է հակամարտությունների և ազգամիջյան խրթին հարաբերությունների սրման ժամանակ: Այդ կարծրատիպի շահարկումը հատկապես ինտենսիվ շրջանառություն է ստանում ռազմական գործողությունների շրջանում: Այն նպաստում է ժողովրդի ներքին համախմբմանը քաղաքական կամ ռազմական ղեկավարության կայացրած որոշումների շուրջ և ժողովրդի կողմից այդ որոշումների անվերապահ հավանությանը: Սակայն կարծրատիպը շարունակում է շահարկվել նաև այն ժամանակ, երբ հարաբերական խաղաղություն է հաստատվում:

Ավելին, ազգամիջյան կամ այլ տեսակի թշնամանքը սկսվում է հենց այդպիսի կարծրատիպերի շահարկումից: Ընդ որում, սկզբում «ուրիշին» վերաբերող կարծրատիպերն ու կլիշեները կարող են միանգամայն անմեղ կատակներ թվալ և նույնիսկ չդիտվել որպես թշնամական: Սակայն, երբ որոշակի խմբեր «ուրիշի» դեմ համախոհներ հավաքագրելու և «ուրիշին» այս կամ այն կերպ հարվածելու նպատակ են հետապնդում, այդ «անմեղ» թվացող կարծրատիպերն ու կլիշեները կատարում են արմատական դեր՝ «ուրիշին» ներկայացնելով որպես դիմագուրկ, անմարդկային մի առարկա, որպես սպառնալիք սեփական հավաքականությանը, որպես մեկը, որը գոյության արժանի չէ, այլ արժանի է միայն ատելության և ոչնչացման: Սա վերաբերում է հակա-

մարտությունների ամենատարբեր տեսակներին՝ սկսած փոքր խմբերից մինչև պետություններ: Ընդ որում, թշնամանք տաժող հանրույթի կողմից «թշնամի» կարող է հռչակվել նաև նույն հանրույթի անդամը:

Վիճակագրությունը հաճախ խրտրականության տարբեր դրսևորումների (այդ թվում ծայրահեղ, ինչպես՝ անձին կամ հավաքականությանը որպես «ուրիշ» դիտարկելու, «ուրիշի» ապամարդկայնացման, «թշնամու կերպարի» կերտման) ավելի բարձր ցուցանիշներ է բացահայտում (Hall, S., 1997) զարգացած, քան պակաս ժողովրդավարական երկրներում: Դա վկայում է նախ այն մասին, որ ոչ ժողովրդավարական հասարակությունները պարզապես չեն գիտակցում, որ նման դրսևորումները խտրականություն են: Միաժամանակ, պետք է նկատել, որ նույնիսկ ժողովրդավարական և հակախտրականության բարձր մշակույթ դրսևորող հասարակություններում հնարավոր են իրավիճակներ, երբ հակամարտությունների սպառնալիքը կամ առկայությունը առաջացնում է «թշնամու կերպարի» կերտում և շահարկում: Այս մասին կոնկրետ օրինակի վրա մանրամասն կանգ կառնենք հաջորդ ենթաթեմային վերաբերող հատվածներում:

Սառը պատերազմի վերջին տարիներին մշակված մի ուսումնական վարժությունում Մեմ Քինը դասընթացի մասնակիցներին առաջարկում էր պատասխանել մի շարք հարցերի, որոնք պիտի նպաստեին «թշնամու կերպարի» մասին նրանց հայացքների վերանայմանը

(Keen): Ահա դրանցից մի քանիսը.

1. Ինչո՞ւ ենք մենք ինքնաբերաբար կասկածի տակ առնում մեզնից տարբերվող մարդկանց: Արդյոք մի՞շտ է անծանոթը չար, վտանգավոր, սարսափազդու:

2. Ինչպիսի՞ խոսքեր, պատկերներ և մակդիրներ ենք գործածում վախն ու ատելությունը բնորոշելու համար: Եվ հակառակը՝ ինչպիսի՞ խոսքեր, պատկերներ և մակդիրներ ենք գործածում բնորոշելու համար նրանց, ում սիրում ենք:

3. Կկարողանայի՞ն գինվորները սպանել, եթե թշնամուն չհամարեին անաստված բարբարոսներ, դավաճան-

ներ կամ էլ ավելի ստոր արարածներ: Կկարողանայի՞նք մեզ ստիպել սպանել մարդկանց, ում նույնքան արժեքավոր ենք համարում, որքան ինքներս մեզ: Կկարողանայի՞նք գնալ պատերազմի առանց թշնամուն չարիք համարելու:

4. Եթե յուրաքանչյուր կողմը հրոշակում է, թե «Աստված իմ կողմից է», ապա ինչպե՞ս պարզել, թե ով է ճիշտ:

Քինի մշակած ձեռնարկը կա համացանցում. այն օգտակար տեսական և պրակտիկ ուսուցողական նյութ է հակամարտություններ լուսաբանող լրագրողների վերապատրաստման համար:

Ուսուցանողի ուղեցույց

1. Ֆիլմի դիտում և քննարկում

Պարապմունքն սկսվում է «Խաղաղության և պատերազմի միջև» ֆիլմի դիտումով: Այն երկու մասից է. առաջինը ներկայացնում է Հայաստանում առկա պատկերացումներն ադրբեջանցիների և «թշնամու կերպարի» մասին, իսկ երկրորդը՝ հայերի նկատմամբ վերաբերմունքի և «թշնամու կերպարի» մասին Ադրբեջանում: Ֆիլմը տևում է 30 րոպե:

Հաջորդ երեսուն րոպեները տրամադրվում են ֆիլմի քննարկմանը: Մասնակիցներին առաջարկվում է կարծիքներ հայտնել ֆիլմում հնչած տեսակետների մասին՝ առարկելով, համաձայնելով կամ լրացումներ անելով: Քննարկման ընթացքում լսելով մասնակիցների կարծիքները, ուսուցանողն առաջարկում է նմանություն գտնել իրենց և ֆիլմի ադրբեջանցի հերոսների հայտնած կարծիքների միջև:

2. «Թերթեր» վարժություն

Վարժությունը կատարելու համար ուսուցանողն առաջարկում է մասնակիցներին բաժանվել խմբերի: Խմբերին տրվում է մեկական թերթ թուղթ և մարկեր: Յուրաքանչյուր խմբին տրվում է նաև մամուլի մեկական հրապարակում և առաջարկվում է ընդգծել այն բառերն ու արտահայտությունները, որոնք, խմբի կարծիքով, էթիկայի տեսակետից անընդունելի են: Ուսուցանողը խնդրում է մասնակիցներին դուրս գրել այդ բառերն ու արտահայտությունները և դրանց փոխարեն առաջարկել իրենց համար ընդունելի ձևակերպումներ:

Վարժության համար կիրառվում են հայկական մամուլի հրապարակումներ, որոնց մեջ, սակայն, «Ադրբեջան» և «ադրբեջանցիներ» բառերը փոխարինված են համապատասխանաբար «Հայաստան» և «հայեր» բառերով: Որպեսզի մասնակիցները վարժության ընթացքում չկռահեն խաղի դրվածքը, պետք է ընտրել այնպիսի հոդվածներ, որպիսիք մասնակիցների կողմից կընկալվեն որպես ադրբեջանցի լրագրողների հրապարակումներ: Ձեռնարկի հավելվածներում ներկայացված են նման հոդվածների նմուշներ, սակայն ուսուցանողները կարող են ինքնուրույն ընտրել այլ հոդվածներ:

3. Արդյունքների ամփոփում

Ուսուցանողն առաջարկում է, որ յուրաքանչյուր խմբից մեկը ներկայացնի խմբային աշխատանքի արդյունքները՝ հոդվածներում ի հայտ բերած էթիկայի տեսակետից անընդունելի արտահայտությունները, և առաջարկի, թե ինչով է հնարավոր դրանք փոխարինել: Վարժության արդյունքների ներկայացման համար հատկացվում է 15 րոպե:

4. Բացահայտում

Երբ արդյունքներն արդեն ներկայացված են, ուսուցանողը հայտնում է, որ հոդվածները քաղված էին ոչ թե հակառակորդ երկրի, այլ հայրենի մամուլից՝ միայն փոփոխված անուններով: Բնական է, որ դա բուն արձագանք կգտնի մասնակիցների մեջ և կմղի նրանց մտածելու հարևան երկրի նկատմամբ սեփական երկրի մամուլի վարքագծի մասին: Մասնակիցներին պետք է խրախուսել արտահայտվելու, պարզապես համակարգելով ազատ քննարկումը:

III. Մանուլը և «թշնամու կերպարը»

Այս բաժնի նպատակն է վերլուծել լրատվամիջոցների դերը «թշնամու կերպարի» ստեղծման և տարածման գործում: Պարապմունքի ընթացքում այդ դերը դիտարկվելու է նախորդ բաժիններում քննարկված լրագրողական էթիկայի, կարծրատիպերի և «թշնամու կերպարի» մասին պատկերացումների համադրմամբ:

Պարապմունքի առաջարկվող կառուցվածքը.

Տևողությունը՝ 90 րոպե:

Անհրաժեշտ պիտույքներ՝ պրոյեկտոր, լափթուփ, տեսասկավառակ

1	Ներածական խոսք	10 րոպե
2	«Մուսուլմանի հետ նման բան չպիտի պատահեր» ֆիլմի դիտում	50 րոպե
3	Ֆիլմի քննարկում	30 րոպե

Ի գիտություն

«Թշնամու կերպարի» կերտման, տարածման և արմատավորման գործում մեծ դեր են խաղում լրատվամիջոցները: Վերջիններս հաճախ որդեգրում են քաղաքական, ռազմական և տնտեսական վերնախավերի հոետորաբանությունը՝ առանց վիճարկելու դրանց էթիկական արժեքը և հաշվի առնելու ազդեցությունը լայն հասարակության վրա: Հակամարտությունների ակտիվ փուլերում կտրուկ նվազման սպառնալիքի տակ է հայտնվում հավատարմությունը լրագրողական պրոֆեսիոնալիզմին. այլապարծությունն անտեսվում է, հաճախ նաև քարկոծվում: Պասիվ փուլերում իրավիճակը մնում է նույնը, սակայն ավելի հազվադեպ և համեմատաբար մեղմ դրսևորումներով:

Վառ օրինակ է այն ազդեցությունը, որ լրատվամիջոցների վրա թողեց Նյու Յորքի և Վաշինգտոնի վրա 2001թ.-ի սեպտեմբերի 11-ին մահապարտ ահաբեկիչների կատարած հարձակումից հետո Միացյալ Նահանգների նախագահ Ջորջ Բուշի որոշումը՝ ռազմական գործողություններ սկսել Իրաքում: Այդ գործողությունը նա կնքեց «պատերազմ ընդդեմ ահաբեկչության» անունով: Ահաբեկչական հարձակումից ցնցված ամերիկացիներից շատ քչերը կասկածի տակ առան այս որոշումը, իսկ հազվագյուտ հակապատերազմական ձայներն անտեսվեցին: Եվ ընդհակառակը՝ խոշոր լրատվամիջոցներն ամբողջ թափով սկսեցին պատերազմական քարոզչություն վարել՝ օգտագործելով Բուշի վարչակազմի հրապարակ նետած բա-

նամթերքը, այդ թվում՝ «պատերազմ ընդդեմ ահաբեկչության» կլիշեն :

Գիտնականների մի խումբ փորձել է քանակական վերլուծությամբ և հարցազրույցների միջոցով բացահայտել, թե ինչու են լրագրողները որդեգրում և արմատավորում քաղաքական վերնախավի ռազմատենչ բառապաշարը: Պատասխանների մեծ մասը վկայում են, որ լրագրողները չեն էլ մտածել, որ կարելի էր այլ կերպ վարվել: «Պատերազմ ընդդեմ ահաբեկչության» (War on Terror) կլիշեն նրանց կարճ և հանրամատչելի էր թվացել: Հետազոտությունը չի ընդգրկում լրագրողների աշխատավայրի՝ տվյալ թերթի խմբագրական քաղաքականության ուսումնասիրությունը, մինչդեռ դա կարող էր ավելի խորքային պատճառներ բացահայտել լրագրողների կողմից վերնախավի բառապաշարի չմտածված կրկնօրինակումից բացի (Lewis, 2009): Այլ ամերիկյան հետազոտություններ ցույց են տալիս, որ մամուլը շարունակում է մուսուլմաններից և արաբներից կերտել «թշնամու կերպար» նույնիսկ հիմա, երբ Սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունը վաղուց անցյալում է, և այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է ԱՄՆ-ի քաղաքացիներին: Դա արվում է արաբներին որպես օտարներ ներկայացնելու միջոցով, ովքեր, իբր, «ինքնըստիներքյան» ամերիկյան արժեքների հակառակորդներ են և վտանգ են ներկայացնում այդ արժեքների տարածման համար (Merskin, 2004):

Ռազմական գործողություններին հաջորդած հարաբերական անդորրի շրջանում այլընտրանքային ձայներն

առավել լսելի են դառնում: Հովարդի համալսարանում վերլուծել են, թե ինչպես և ինչու էին խաղաղասիրական ծայներն անտեսվում Մեյտենբերի 11-ին հաջորդող ամիսներին, ինչպես էր կասկածի տակ դրվում խաղաղասիրական դիրքերից հանդես եկողների հայրենասիրությունը, և թե ինչպես միայն մոտ վեց ամիս անց վերջիններիս հաջողվեց հետզհետե հասնել խոշոր լրատվամիջոցներին և լսելի դառնալ լայն հասարակությանը՝ թեպետև պատերազմն արդարացնող ծայներից անհամեմատ ավելի փոքր ծավալով (Klein, 2009):

Հակամարտությունների լուսաբանմանը նվիրված խորքային հետազոտությունները ցույց են տալիս, որ իրականում լրատվամիջոցները ոչ թե ստեղծում են, այլ տարածում են քաղաքական և տնտեսական վերնախավերի կողմից ստեղծված պատկերացումները հակառակորդ կողմի մասին (և ոչ միայն դրա մասին), ինչպես ջրվեժի պարզ մոդելի միջոցով նկարագրել է տեսաբան Ռոբերտ Էնթանը: Ջրվեժի վերևում վերնախավն է, իսկ լրատվամիջոցները՝ նրանցից քիչ ներքև: Լայն հասարակությունը գտնվում է ջրվեժի ստորին ավազանում. դեպի վեր հետ ցայտող՝ ջրի փոքրիկ շիթերն այն անդրադարձումն է, որ հասարակությունը հղում է վեր՝

միայն երբեմն կարողանալով հասնել լրատվամիջոցներին, և վերջիններիս միջոցով՝ վերնախավին (Entman, 2004): Այս տեսությունն արմատականորեն վիճարկում է լրատվամիջոցների կողմից հակամարտությունների լուսաբանման ձևի և բովանդակության ընտրության ինքնուրույնությունը:

Հայաստանում և Ադրբեջանում լրատվամիջոցների կողմից դարաբաղյան հակամարտության լուսաբանումը նույնպես լի է երկու երկրների ղեկավարությունների օգտագործած բնորոշումներով և ոգով: Որոշ լրատվամիջոցներ, ինչպես նաև ռուսալեզու շատ բլոգերներ, իրենց պարտքն են համարում հանդես գալ շատ ավելի սուր և ռազմատենչ հոետորաբանությամբ, քան հայրենի կառավարությունը: Այսպիսի մոտեցումը բնորոշ է ոչ միայն նպատակադրված հակաադրբեջանական (Ադրբեջանում՝ հակահայկական) քարոզչության առաքելություն որդեգրած լրատվամիջոցներին, այլև լրագրողական պրոֆեսիոնալիզմին հավաստարիմ լրատվամիջոցներին և լրագրողներին: Համատարած ռազմատենչ հոետորաբանության մթնոլորտում շատ դժվար է հետևողական լինել և չանցնել պրոֆեսիոնալ լուսաբանման և քարոզչության միջև նուրբ սահմանը:

Ուսուցանողի ուղեցույց

1. Երկու խոսք ֆիլմի մասին

Ցանկալի է ֆիլմի դիտումն սկսել փոքրիկ (10 րոպեանոց) ներածությամբ,

մասնակիցների ուշադրությունը հրավիրելով այն փաստի վրա, որ լրագրողական էթիկայի և հակամարտությունների լուսաբանման խնդիրները բնորոշ են ոչ միայն Հայաստանին, այլև արևմտյան ժողովրդավարություններին, որտեղ ահաբեկչական գործողությունները մարդկանց մեջ բավական լայնատարած վախ և ատելություն են առաջացրել իսլամական մշակույթի նկատմամբ:

2. Ֆիլմի դիտում

Ուսուցանողի առաջարկությամբ «Մուսուլմանի հետ նման բան չպիտի պատահեր» ֆիլմի դիտման ընթացքում մասնակիցները կարող են կատարել գրառումներ՝ քննարկման ժամանակ օգտագործելու համար: Ֆիլմի տևողությունը մոտ 50 րոպե է:

3. Քննարկում

Դիտմանը հաջորդող քննարկման ընթացքում (30 րոպե) ուսուցանողը նախ թույլ է տալիս քննարկել բրիտանական իրականությունը, այնուհետև խնդրում է մասնակիցներին ֆիլմում տեսածը համեմատել հայկական իրականության հետ:

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

Հատկանշական է, որ *մամուլագիտությունը (մեդիա գիտություններ)* սկսել է զարգանալ այն պահից, երբ հետազոտողները փորձել են ինչ-որ կերպ արձագանքել լրատվամիջոցների անպատասխանատու վարքին պատերազմական իրավիճակներում:

1896-ին, երբ Միացյալ Նահանգները և Իսպանիան գաղտնի բանակցություններ էին վարում Կուբայի շուրջ, իսկ Կուբայում ընթանում էր ազատագրական պայքար, ամերիկացի հրատարակիչ Վիլյամ Ռանդոլֆ Հըրսթը նկարիչ-իլյուստրատոր էր գործուղել Կուբա՝ լուսաբանելու հնարավոր պատերազմը Կուբայի և Իսպանիայի միջև: Երբ նկարիչը հեռագիր էր ուղարկել Հըրսթին, ինդրելով թույլ տալ վերադառնալ հայրենիք, քանի որ ամեն ինչ խաղաղ է և ոչ մի պատերազմ չի սպասվում, Հըրսթը նրան պատասխանել էր. «Ինդրում եմ մնացեք: Դուք ձևավորեք նկարները, ես կձևավորեմ պատերազմը: Հըրսթ» (Baran, J.S. & Davis, D.K., 2009):

Սա դասական պատմական օրինակ է, որը ցույց է տալիս, թե լրատվամիջոցների անպատասխանատու գործունեությունն ինչպես կարող է թեժացնել հակամարտությունները հանուն լայն սպառման և առավելագույն եկամուտների:

Լրատվամիջոցները կարող են ունենալ սոցիալ-տնտեսական, կամ քաղաքական շահեր, սակայն դրանք չպետք է վեր դասվեն լրագրողական պրոֆեսիոնալիզմի և էթիկայի սկզբունքներից: Հակամարտող կամ հակառակորդ կողմի մասին որևէ պատմություն լուսաբանելիս, լրագրողը պետք է մշտապես հարց տա իրեն. **«Ինչին է ծառայում լրագրությունը»:** Պատասխանները կարող են լինել տարբեր: Ամենատարածված պատասխանն է՝ ճշմարտությանը: Սակայն միշտ է, որ ճշմարտությունն օբյեկտիվ է: Պարտավոր է, արդյոք, լրագրողը մտահոգվել այն հարցով, թե իր

մատուցած տեղեկություններն ինչպես կարող են մեկնաբանվել: Արդյո՞ք ճշմարտացի են այնպիսի լուսաբանումները, որոնցում կոնկրետ անձի կամ խմբի գործողություններն ու հայացքները վերագրվում են մի ամբողջ հանրույթի՝ չներկայացնելով նույն հանրություն ասկա այլընտրանքային տեսակետները: Ընդունելի՞ է, արդյոք, պրոֆեսիոնալ լրագրության մասնակցությունը հակամարտության քարոզչությանը, կամ հակամարտությունների խաղաղ հանգուցալուծմանը: Արդյոք մարդո՞ւ, թե՞ պետության շահն է առաջնահերթ էթիկայի տեսակետից, և արդյո՞ք այդ շահերը հակադիր են: Մրանք հարցեր են, որոնց շուրջ բանավեճերը շարունակական են և որոնց պատասխանները զարգացման տարբեր դինամիկա ունեն տարբեր երկրների լրագրողական ավանդույթներում: Այս հարցերի պատասխաններն է, որ առաջարկվում է գտնել նաև այս գլխում ներկայացվող պարապմունքների ընթացքում:

Հինգ տարվա ընթացքում, հետազոտելով տասնյակ հազարավոր լրագրողական միավորներ (հոդվածներ, ակնարկներ, վերլուծություններ, հեռուստատեսային ռեպորտաժներ և այլն)՝ հայաստանյան «Երևանի մամուլի ակումբ» և ադրբեջանական «Ենի Նեսիլ» լրագրողական կազմակերպությունները եզրակացրել են, որ երկու երկրներում էլ հակամարտությունը լուսաբանելիս լրատվամիջոցները քիչ են նպաստում հարևան ժողովուրդների միջև փոխըմբռնմանը և վստահության մթնոլորտի ստեղծմանը, մինչդեռ դա խաղաղության հասնելու կարևորագույն նախապայմաններից մեկն է: Ըստ հեղինակների, լրագրողները նպաստում են հին բացասական կարծրատիպերի կենսունակությանը և խթանում նորերի ստեղծումը, թույլ են տալիս այնպիսի սխալներ և արտահայտություններ, որ վրդովմունք և ագրեսիա են առաջացնում հարևան երկրում, մինչդեռ դժվար չէ դրանցից խուսափելը. «Զե՞ որ դժվար չէ լրագրողի համար համացանցում ստուգել քաղաքական գործիչների անունների և պաշտոնների ճիշտ տառադարձումը, «նենգ քննիչ»-ի փոխարեն գրել պարզապես «քննիչ»» (Ереванский пресс-клуб и “Ени неси”, 2010): Հետազոտողները գտնում են, որ դժվար է, բայց ո՛չ անհնարին երկու երկրների լրագրողական պրակտիկայից արմատախիլ անել քարոզչական կլիշեների գործածումն ու պրոֆեսիոնալ լրագրությանն անհարիր տարրերը դարաբաղյան հակամարտության լուսաբանման ընթացքում: Այդ նպատակին են ուղղված բազմաթիվ հետազոտություններ, ուսուցողական ծրագրեր, փոխճանաչողական այցեր, լրագրողական համագործակցության փորձեր և այլն: Դրան են միտված եղել նաև Եվրասիա համագործակցություն հիմնադրամի իրականացրած «Հակամարտությունների լուսաբանման սկզբունքներն ու չափանիշերը» ուսուցողական պարապմունքների շարքը լրագրողների համար և դրա արդյունքում սույն ձեռնարկի ստեղծումը:

Պարապմունքի նպատակը

Այս գլխում քննարկվում են հակամարտությունների լուսաբանման տարատեսակ նմուշներ՝ քարոզչությունից մինչև բարեխիղճ պրոֆեսիոնալ լուսաբանում: Պարապմունքների նպատակն է մասնակիցներին առիթ տալ դիտարկելու լրագրողական պրոֆեսիոնալիզմին և էթիկային համապատասխան լուսաբանման

սկզբունքները և ուղիները, որոնց գիտակցումը խորացնում է նրանց մեջ մասնագիտական պատասխանատվության զգացումը, մտածել է տալիս այն մասին, որ հակամարտություններում իրենց կատարած դերը կարող է լինել ինչպես խաղաղասիրական, այնպես էլ՝ ռազմատենչ: Լրագրողները ծանոթանում են հակամարտությունների լուսաբանման տարբեր մոտեցումների, վեր են հանում բոլոր հակամարտություններին բնորոշ՝ «երկու կողմերի ճշմարտությունները», քննարկում են հակամարտությունների պրոֆեսիոնալ լուսաբանման միջոցները, ինչպես նաև քննում են Հարավային Կովկասում հակամարտությունների լուսաբանման դինամիկան: Պարապմունքները հանգեցնում են լրագրողի և լրատվամիջոցների էթիկական ընտրության հրամայականի գիտակցմանը:

Երկրորդ մասի ենթաթեմաները

Հակամարտությունների լուսաբանման խնդիրներն ըստ հնարավորին ամբողջականորեն վերհանելու համար ուսուցանողներին առաջարկվում է անցկացնել պարապմունքներ հետևյալ ենթաթեմաների վերաբերյալ՝

- «Իմ ճշմարտությունը» (երկու հակադիր ճշմարտություններ),
- «Կոնֆլիկտաբանություն»,
- «Թշնամուն» լուսաբանելիս»,
- «Վստահությունը լրատվամիջոցների նկատմամբ և դրանց դերը հակամարտություններում»:

I. «Իմ ճշմարտությունը»

Պարապմունքի նպատակն է գտնել հակամարտությունների լուսաբանման այն մոտեցումը, որն առավել ընդունելի է անաչառ և բարեխիղճ լրագրության համար: Պարապմունքն ի ցույց է դնում հակամարտությունների առկայության պարագայում տեղեկությունների հավաստիության վիճելիությունը և երկու կողմերի համոզվածությունն այն բանում, որ իրենք իրավացի են, իսկ հակառակորդ կողմը՝ ոչ: Մասնակիցները փորձում են պատասխանել այն հարցին, թե **հնարավոր է, այդպե, մասնագիտական հեռավորություն պահել թեմայից՝ հակամարտությունը լուսաբանելիս, երբ ինքդ ներգրավված ես հակամարտության մեջ:**

Պարապմունքի առաջարկվող կառուցվածքը.		
Տևողությունը՝ 120 րոպե:		
Մնեհրաժեշտ պիտույքներ՝ գրատախտակ կամ ֆլիպ-չարթ, մարկերներ, հրապարակումների նմուշներ		
1	«ԳՇ-ն հաղորդում է» վարժություն	15 րոպե
2	«Ֆուտբոլ» խաղ	20 րոպե
3	«Ուղղագրության կանոններ» ֆիլմի դիտում	35 րոպե
4	Քննարկում	25 րոպե

Ի գիտություն

Հակամարտության կողմերից յուրաքանչյուրը սովորաբար հավատացած է, որ ինքն իրավացի է, իսկ հակառակորդը՝ ոչ: Այդ համոզվածությունը կարող է բխել օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներից, սակայն սա չի նշանակում, որ կողմերից մեկն անպայման սխալվում է: Սա նշանակում է միայն, որ երկու կողմերն էլ իրավացի են մասամբ: Ուստի կողմերի երկխոսության պարագայում հնարավոր է ամբողջացնել «ճշմարտությունը», այսինքն՝ սեղանին դնել առկա բոլոր տեղեկությունները, մոտեցումները, մտահոգությունները և քննարկել դրանք:

Եթե կողմերը պատրաստ են լսել և հաշվի առնել նաև դիմացի կողմի տեսակետները, ապա հակամարտությունը կարող է ընթանալ կառուցողական ճանապարհով: «Ճշմարտության» համակողմանի և ամբողջական ներկայացումը բավարար պայման չէ հակամարտության լուծման համար, սակայն հենց դա է անհրաժեշտ հակամարտության պրոֆեսիոնալ լուսաբանման համար: Հակամարտության լուծման կարևոր նախապայման է խաղաղ և հաշտ հեռանկարին միտված ծրագիրը՝ դրված կողմերի սեղանին, այլապես «ճշմարտության» համակողմանի ներկայացումը չի տա ավելին, քան պարզապես փոխադարձ տեսակետների պարզաբանումն է:

Հայ և ադրբեջանցի լրագրողների համար առավել դժվար է դարաբաղյան հակամարտության լուսաբա-

նումը, որովհետև նրանք հակամարտող կողմերի ներկայացուցիչներ են և դժվար թե կարողանան անկողմնակալ լինել իրենց լուսաբանումներում: Շատերն ի սկզբանե մերժում են անկողմնակալ լուսաբանելու անհրաժեշտությունը՝ գտնելով, որ որպես հայրենասեր քաղաքացիներ, իրենք պարտավոր են լավագույն կերպով ներկայացնել սեփական կողմը և բացասական երանգներով պատկերել «հակառակորդին»: Ցավոք, այս մոտեցման կողմնակիցներից քչերն են, որ տարբերակում են հարևան և սեփական երկրների պաշտոնական և ոչ պաշտոնական մոտեցումները՝ սեփական կամ հարևան երկիրը ներկայացնելով որպես համասեռ հանրույթ, որտեղ կարող է գոյություն ունենալ միայն մեկ համընդհանուր կարծիք, որը միատեսակ է: Սա փակուղային մոտեցում է, որը չի նպաստում ժողովուրդների փոխճանաչողությանը, առավել ևս՝ հաշտեցմանը:

Հակամարտությունը հավասարակշիռ և համակողմանի լուսաբանելու հակված լրագրողներին կարող են կաշկանդել ինչպես պաշտոնական հայեցակետերի և սեփական հասարակության ճնշումը, այնպես էլ անձնական զգացմունքները, հակառակորդ կողմի հանդեպ իրենց վերաբերմունքը. ընդ որում, դրանք երբեմն շատ դժվար է տարբերակել զանգվածային քարոզչության և առաջնային աղբյուրների աղության պայմաններում: Դժվար է, սակայն հնարավոր է: Եվ այդ հնարավորությունը պիտի ցուցադրվի այս պարապմունքում:

Ուսուցանողի ուղեցույց

1. «Գլխավոր շտաբը հաղորդում է»

Խաղը նախատեսված է ի ցույց դնելու հակամարտությունների ժամանակ տեղեկությունների հակասականությունն ու դրանց հավաստիության վիճելիությունը: Խաղի համար հարկավոր է հայ-ադրբեջանական միևնույն սահմանային միջադեպի մասին երկու նմանատիպ պայմանական հաղորդագրություն, որից մեկը թողարկել է Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբը, իսկ մյուսը՝ Ադրբեջանի զինված ուժերի գլխավոր շտաբը: Մեկում հաղորդվում է, որ ադրբեջանցիներն են խախտել զինադադարի ռեժիմը և լռել են հայերի պատասխան կրակից հետո, մյուսում հաղորդվում է, որ հայերն են առաջինը կրակ բացել և ադրբեջանցիների պատասխան կրակից հետո լռել են:

Ուսուցանողը խնդրում է պարապմունքի երկու մասնակիցների՝ հերթով կարգալ այս հաղորդագրությունները, այնուհետև հարցնում է ներկաներին, թե ո՞ր հաղորդագրությանն են նրանք հավատում, ինչո՞ւ, ինչպե՞ս կարելի է պարզել ճշմարտությունը, և արժե՞ արդյոք, պարզել: Վարժությանը տրամադրվում է 15 րոպե:

2. «Ֆուտբոլ» խաղ

Ուսուցանողը գրատախտակին կամ ֆլիպ-չարթի վրա կանաչ մարկերով ֆուտբոլի դաշտ է գծում՝ մասնակիցներին առաջարկելով դիտարկել այն որպես հակամարտության գոտի: Այնուհետև երկու կիսադաշտերում կապույտ և կարմիր մարկերներով՝ կետերի տեսքով պատկերում է խաղացողներին և հարցնում լսարանին, թե ո՞ր խաղացողի համար է առավել տեսանելի ամբողջ դաշտը:

Պատասխաններն ընդունելով՝ ուսուցանողն առաջարկում է մասնակիցներին ընտրել իրենց տեղերը դաշտում կամ դաշտի շուրջը և նրանց առաջարկած գույներով համապատասխան կետեր է դնում իրենց նշած տեղերում: Խաղը պետք է հանգեցնի այն եզրակացությանը, որ «խաղադաշտը», այսինքն՝ հակամարտության գոտին, առավելապես տեսանելի է երկու կիսադաշտերից համաչափ հեռավորություն պահպանելու դեպքում:

Մասնակիցները քննարկում են, թե հնարավոր է, և արժե՞ արդյոք հավասար և անկողմնակալ կերպով լուսաբանել հակամարտությունն այն դեպքում, երբ ինքդ քեզ այդ հակամարտության կողմ ես համարում: Քննարկումն ամփոփվում է 20 րոպեում:

3. «Ուղղագրության կանոններ» ֆիլմի դիտում

Դիտումը նպատակ ունի մասնակիցներին ցույց տալ հակամարտության լուսաբանման այնպիսի օրինակ, որում հեղինակը (Տիգրան Պասկեյան), չթաքցնելով իր՝ հակամարտության կողմերից մեկին պատկանելու հանգամանքը, կարողացել է լուսաբանել հակամարտության հետևանքները միայն իր կողմում՝ մասնագիտական հեռավորություն պահպանելով նյութից և այն մեկնաբանելով հումանիստորեն:

4. Քննարկում

Քննարկման ընթացքում ուսուցանողը հնարավորություն է տալիս մասնակիցներին ազատորեն արտահայտվելու պարապմունքում արտացոլված խնդիրների մասին: Նա խնդրում է դիտել ֆիլմը որպես հակամարտության լուսաբանման այնպիսի դեպք, երբ լուսաբանողը հակամարտող կողմի ներկայացուցիչ է, և մտածել՝ ընդունելի՞ է, արդյոք, նման լուսաբանումը, պատրաստ են, արդյոք, մասնակիցները նույն կերպ լուսաբանելու, ինչպես նաև ստուգելու գլխավոր շտաբի թողարկած հաղորդագրությունները: Քննարկման ընթացքում ուսուցանողը պետք է զերծ մնա հակամարտության պաշտոնական քարոզչությունը և պրոֆեսիոնալ լուսաբանումը միմյանց հակադրելուց և թույլ տա մասնակիցներին ինքնուրույն հանգելու սեփական եզրակացությունների:

II. Հակամարտություններ

Այս բաժնի նպատակն է դասընթացի մասնակիցներին զինել կոնֆլիկտաբանության մասին սկզբնական գիտելիքներով, որոնք կօգնեն նրանց վերհանել հակամարտությունների լուսաբանման խնդիրները և գտնել դրանք հաղթահարելու հնարավորությունները:

Պարապմունքի առաջարկվող կառուցվածքը.

Տևողությունը՝ 120 րոպե:

Անհրաժեշտ պիտույքներ՝ լափթոփ, պրոյեկտոր, թուղթ, մարկերներ, հոդվածների նմուշներ՝ 3-4 խմբի համար, տեսասկավառակ

1	Մոքերի գրոհ՝ «Ինչն է լավ և ինչը՝ վատ» հակամարտությունների լուսաբանման ժամանակ	15 րոպե
2	PPT մատուցում՝ Ներածություն կոնֆլիկտաբանության մասին	30 րոպե
3	«Կամուրջ վադիի վրա» ֆիլմի դիտում	55 րոպե
4	Քննարկում	20 րոպե

Ի գիտություն

Հակամարտությունների կառավարմանը և կարգավորմանը նվիրված են ծավալուն աշխատություններ, ուստի հնարավոր չէ դրանց մանրամասնորեն աղբադառնալ մեկ պարապմունքի ընթացքում: Մակայն հնարավոր է պարապմունքի մասնակիցներին ծանոթացնել ընդհանուր սկզբունքներին, որոնք նկատի ունենալով, լրագրողները առավել տեղեկացված և պրոֆեսիոնալ կլինեն հակամարտություններ լուսաբանելիս:

Հակամարտություն (կոնֆլիկտ) հասկացությունը տարբեր ձևակերպումներ ունի՝ կախված դրա մեկնաբանությունից: Միաժամանակ տեսությունները համընկնում են այն բանում, որ հակամարտությունը անհատների, խմբերի միջև հակադիր շահերի, հայացքների բխումն է (ընդ որում՝ հակադրությունը կարող է լինել իրական կամ թվացյալ): Այն պայքար է, որում երկու կողմերը փորձում են ազդել միմյանց վրա և հակազդել միմյանց: Հակամարտությունը կարելի է սահմանել նաև որպես վեճ, սուր տարաձայնություններ, շահերի բխում (Աբասով, Ա., Աբդուլվահաբովա, Ս., Աբդուլասա, Ա., Ասադովա, Ս., Բեզիրջյան, Խ., Բերիա, Ս., Մարտիրոսյան, Ն., Սարգիզովա, Ջ., Խարաշվիլի, Յ., 2006): 1960-ականներին կոնֆլիկտաբան Լ. Փոնդին հակամարտության մասին եղած տարբեր մոտեցումներն ամփոփեց մեկ ընդհանուր սահմանման մեջ՝ *գործընթաց, որը ներառում է հակասող պայմաններ, հույզեր, ընկալումներ և վարք*: Քառորդ դար հետո Ջեննեթ Թոմասն այս սահմանումը վերած-

ե-վակերպում է որպես մի գործընթաց, որը սկսվում է, երբ մի կողմում ձևավորվում է մտայնություն, թե մյուս կողմը ոտնահարում է կամ մոտ է ոտնահարելու իր շահը» (Thomas, 1992):

Հակամարտությունները, որպես կանոն, մեկնաբանվում են որպես բացասական երևույթներ, սակայն միշտ չէ, որ բացասական զարգացում են ունենում: Դրանք լինում են կառուցողական և ապակառուցողական: Հարկավոր է ընդգծել, որ հակամարտությունների կառուցողական զարգացումը ենթադրում է զարգացման հեռանկարի սահմանում՝ ի տարբերություն ապակառուցողական հակամարտությունների, որտեղ կողմերն ավելի շատ շահագրգռված են դիմացինին առավել ուժգին ամբաստանել և հարաբերություններ պարզել, քան հեռանկար գծագրել: Կառուցողական են համարվում այն հակամարտությունները, որոնք նպաստում են հակասությունների բացահայտմանը, մտքերի փոխանակմանը, խմբակային ստեղծագործությանը, հակասությունների հաղթահարմանը և կոնսենսուսի մթնոլորտի ստեղծմանը: Ապակառուցողական են համարվում այն հակամարտությունները, որոնց դեպքում կողմերը ճնշում են միմյանց՝ առանց փորձելու լսել և ընկալել հակառակ կողմի կարծիքը: Նման դեպքերում հակամարտությունները հասցնում են բևեռացման, հաճախ ուղեկցվում են բռնություններով ընդհուպ, մինչև միմյանց ոչնչացնելու ձգտումով: Դրանց հետևանքները կարող են աղետալի լինել՝ իսկ և խեղել մարդկային կյանքեր ու

սոցիալ-հոգեբանական կյանքի ներդաշնակությունը («Խաղաղության և գենդերի ուսուցում», 2006):

Թեև հակամարտության վերոհիշյալ մեկնաբանությունները ընդհանուր են

և վերաբերում են թե՛ միջանձնային, և թե՛ միջմարմնային հարաբերություններին, սակայն այս պարապմունքների նպատակն է կենտրոնանալ ազգամիջյան հակամարտությունների լուսաբանման խնդիրների վրա:

Ուսուցանողի ուղեցույց

1. «Ինչն է լավ և ինչը՝ վատ» հակամարտությունների լուսաբանման ժամանակ

Ուսուցանողն առաջարկում է մտքեր փոխանակել այն մասին, թե հակամարտությունների լուսաբանումներում ի՞նչն է լավ և ի՞նչը՝ վատ: Մտքերի գրոհը տևում է 15 րոպե: Ուսուցանողը խրախուսում է մտքերի փոխանակությունը՝ առանց մեկնաբանելու դրանք: Միաժամանակ, լսելով մասնակիցների մեկնաբանությունները՝ նա հակիրճ հարցադրումներ է անում, թե արդյո՞ք որպես դրական ներկայացված լուսաբանումը նաև բացասական կողմեր ունի և հակառակը՝ արդյո՞ք բացասական ներկայացված լուսաբանման կերպն ամբողջապես բացասական է:

2. Ներածություն կոնֆլիկտաբանության մասին

Ուսուցանողը PPT ֆորմատով մոնիտորի վրա ընդհանուր տեղեկություններ է մատուցում կոնֆլիկտաբանության մասին, ծանոթացնում է հակամարտությունների կարգավորման սկզբունքներին, որոնք լրագրողներին պատկերացում են տալիս կոնֆլիկտաբանության, հակամարտությունների զարգացման և լուծման տրամաբանության մասին և կարող են օգտակար լինել հակամարտություններ լուսաբանելիս:

3. «Կամուրջ վաղիի վրա» ֆիլմի դիտում

Այս վավերագրական ֆիլմը (ռեժիսորներ՝ Թոմեր Հեյման և Բարակ Հեյման) պատմում է երկու իսրայելցիների՝ արաբ Ամին Խալաֆի և հրեա Լի Գորդոնի «Ձեռք ձեռքի. հրեա-արաբական կրթության կենտրոն» նախաձեռնության հիմնածերկլեզվյան դպրոցներից մեկի մասին՝ արաբական Քաֆր Կարա քաղաքում: Գործող անձանց անձնական պատմությունների միջոցով ֆիլմում ներկայացված են քաղաքական բարդ իրավիճակում երկլեզվյան կրթություն իրականացնելու խնդիրները: Ֆիլմի հեղինակն է Պերլա Մինոնդը:

4. Քննարկում

Մասնակիցներին առաջարկվում է քննադատաբար մոտենալ նյութին, կատարել նշումներ և վերլուծել, թե ինչի՞ հիման վրա է կատարվել այս աշխատանքը, արդյո՞ք այն լիովին էթիկական է և օբյեկտիվորեն է արտացոլում իրականությունը, ի՞նչ հարցեր են ծագել ֆիլմի դիտումից, ի՞նչը կփոխելիս ֆիլմում մասնակիցները:

III. «ԹՇՆԱՄՈՆ» լուսաբանելիս

Այս բաժնի նպատակն է դիտարկել հակամարտությունների լուսաբանման գործում լրագրողների էթիկական ընտրության խնդիրը և լրատվամիջոցների դերը՝ տեղեկությունների մատչելիության և թափանցիկության բացակայության պայմաններում: «ԹՇՆԱՄՈՆ» պատկերելու ինչպիսի՞ հանրավորություններ ունեն լրագրողները, արդյո՞ք լիարժեքորեն են օգտվում դրանցից, կամ փորձում են ստեղծել նոր հանրավորություններ, հասնել առաջնային աղբյուրներին, գտնել նորերը, որքան էլ որ դա դժվար լինի:

Պարապմունքի առաջարկվող կառուցվածքը.

Տևողությունը՝ 90 րոպե:

Անհրաժեշտ պիտույքներ՝ լսափաթիվ, պրոյեկտոր, տեսասկավառակ:


1	«ԹՇՆԱՄՈՆ կերպարը» ֆիլմի դիտում	60 րոպե
2	Քննարկում	30 րոպե

Ի գիտություն

Ինչպես արդեն նշվել է վերևում, արևմտյան մամուլագիտությունը (զանգվածային հաղորդակցության և մեդիա գիտությունները) բավականին քննախույզ կերպով զննում և վերլուծում է լրատվամիջոցների տեղն ու դերը հասարակության մեջ, մասնավորապես՝ հակամարտությունների հանրային ընկալումների մեջ: Այն տասնամյակներ ի վեր մշակել է մի շարք տեսություններ, որոնք, լինելով փոխլրացնող և երբեմն հակասական, օգնում են վերլուծելու այդ տեղն ու դերը: Վերջին տասնամյակում առատ են հետազոտությունները հատկապես իրաքյան պատերազմի լուսաբանման մասին: Հետազոտությունները

ցույց են տալիս, որ սկսած Վիետնամի պատերազմից մինչև իրաքյան պատերազմը խոշոր լրատվամիջոցները միայն ուժգնացրել են հակամարտությունների լուսաբանման ռազմատենչ հոետորաբանությունը՝ հակառակ այն բանին, որ լրագրողական էթիկայի և պրոֆեսիոնալիզմի չափանիշները զգալիորեն բարձրացել են տասնամյակների ընթացքում:

Ինչպես բոլոր երկրներում, Միացյալ Նահանգներում նույնպես հեռուստատեսությունը մեծ ազդեցություն ունի լսարանների վրա: Երկրորդ տեղում են խոշոր օրաթերթերը, որ չնայած համացանցում ներկայացված լինելուն, շարունակում են մեծ տպաքանակով սպառվել ԱՄՆ-ում: Ի



տարբերություն Հարավային Կովկասի, ԱՄՆ-ում լրատվամիջոցների թիկունքում ոչ թե քաղաքական, այլ տնտեսական վերնախավերն են կանգնած, որոնք, ինչ խոսք, իրենց ծանրակշիռ ձայնն ու ազդեցությունն ունեն ԱՄՆ քաղաքականության մեջ, այդ թվում՝ մամուլի միջոցով:

Ըստ Էդվարդ Ս. Հերմանի և Նոամ Խոմսկու մշակած «պրոպագանդայի մոդելի» ԶԼՄ-ներում ներկայացված լրատվությունն անցնում է հինգ հիմնական ֆիլտրերով: Դրանք են՝

1. ԶԼՄ-ի պատկանելությունը,
2. ֆինանսական աղբյուրները,
3. տեղեկատվական աղբյուրները,
4. թշնամական բանադատությունը (flak),
5. հակակոմունիզմի և վախի գաղափարախոսությունը:

Վերջինը վերաբերում է «արտաքին թշնամուն», որի դերակատարը ժամանակի ընթացքում կարող է փոխվել: Հերմանի և Խոմսկու համոզմամբ, այս հինգ գործոններն են այն ֆիլտրերը, որոնք ձևավորում են գերիշխող դիսկուրսը և փոխանցում այն լայն լսարաններին: Հեղինակները գտնում են, որ չնայած վերնախավերի և լրատվամիջոցների ջանքերին, քարոզչությունը միշտ չէ, որ արդյունքի է հասնում: Այդ

իրողությանը նպաստում է նաև համացանցը, որն օրեցօր ավելի ու ավելի սուր մրցակցության մեջ է մտնում հեռուստատեսության հետ (Herman, 2002):

Հակամարտությունների ծագման և զարգացման ընթացքում իրադարձությունների արագ ծավալումը և տեղեկությունների սրընթաց հոսքը հաճախ թույլ չեն տալիս ժամանակին վերլուծելու և կասեցնելու լուսաբանման ռազմատենչ բնույթը, որն ավելի է բորբոքում հասարակական կրթերը: Այդ շրջանում կշռադատված վերլուծությունները շատ քիչ տեղ են զբաղեցնում լրատվական հոսքերում և մնում են գրեթե անլսելի: Մինչդեռ հենց այդպիսիք են, որ չափանիշներ են կազմավորում հետագա հակամարտությունների պրոֆեսիոնալ և էթիկական լուսաբանման համար կասեցնելով լրատվամիջոցների մասնակցությունը հակամարտությունների զարգացմանը:

Շարունակվում են նաև տեսական վեճերն այն մասին, թե ինչպես որոշել սահմանը լրագրողի ազատության և պատասխանատվության միջև: Այդ ինդրի քննարկումը՝ հաջորդ գլխում:

Ուսուցանողի ուղեցույց

1. «Թշնամու կերպարը» ֆիլմի դիտում

Ուսուցանողը նախօրոք ներկայացնում է «Թշնամու կերպարը» վավերագրական ֆիլմը (մոտ 60 րոպե)՝ ընդգծելով, որ հատուկ ընտրված է մի ֆիլմ, որը չի

վերաբերում դարաբաղյան հակամարտության կողմերից որևէ մեկին՝ մասնակիցներին առավելագույնս անաչառորեն վերլուծելու հնարավորություն ընձեռելու համար: Կարճ ներածության մեջ նա ներկայացնում է ամերիկյան լրատվամիջոցների կառուցվածքը, դրանց սոցիալական, քաղաքական, տնտեսական միջավայրը, դրանց ազդեցությունը հասարակության վրա և դերը հակամարտություններում: Այնուհետև ուսուցանողն առաջարկում է դիտել ֆիլմը և դիտման ընթացքում գրի առնել իրենց դիտողությունները՝ քննարկման ժամանակ օգտագործելու համար: Մասնակիցներին խորհուրդ է տրվում ուշադրություն դարձնել իրենց համար ընդունելի և անընդունելի հնարքներիին, որոնք գործադրվում են ամերիկյան հեռուստատեսային լուսաբանումներում, ինչպես նաև դրանց մասին ֆիլմում հնչած մեկնաբանություններին:

Եթե դիտման ընթացքում կարիք է լինում ընդհատելու դիտումը՝ ճշգրտումներ կատարելու համար (երկու-երեք անգամից ոչ ավելի), ուսուցանողը չի առարկում և ընդառաջում է քննարկման մասնակիցներին: Սակայն հաճախակի ընդհատումները կարող են խափանել դիտումը:

2. Քննարկում

Ֆիլմի դիտումից հետո ուսուցանողը խնդրում է մասնակիցներին տպավորություններ փոխանակել միմյանց հետ, այնուհետև նշել, թե ամերիկյան լուսաբանումներում ինչն էր նրանց համար ընդունելի և ինչն՝ անընդունելի: Բավականաչափ կարծիքներ հավաքելուց հետո, ուսուցանողն առաջարկում է մտաբերել հայրենի լրատվամիջոցների կողմից դարաբաղյան հակամարտության լուսաբանման այնպիսի օրինակներ, որոնք համեմատելի են ամերիկյան լուսաբանումների բնույթիին: Հնարավոր է, որ մասնակիցները գերադասեն բացասական լուսաբանման ամերիկյան նմուշները համադրել ոչ թե սեփական երկրի, այլ հակառակորդ երկրի լրատվամիջոցների լուսաբանումների հետ: Այդ դեպքում ուսուցանողը թույլ է տալիս, որ մասնակիցներն արտահայտվեն, և վերջում նորից խնդրում է հիշել հայրենի լրատվամիջոցների նմանատիպ հրապարակումները:

Այնուհետև ուսուցանողը խնդրում է լսարանին վերլուծել, թե, դատելով «Թշնամու կերպարը» վավերագրական ֆիլմից, ինչպես են ամերիկյան հեռուստաընկերություններն ազդել ԱՄՆ հասարակության և հակամարտությունների ընթացքի վրա: Պատասխաններից հետո առաջադրվում է նոր հարց՝ արդյո՞ք հայրենի լրատվամիջոցները նույնքան ազդեցիկ են և, հետևաբար, նույնքան պատասխանատու՝ հակամարտությունների ընթացքի համար:

Ամփոփելով քննարկման արդյունքները, ուսուցանողը խորհուրդ է տալիս մասնակիցներին մտածել այն մասին, թե կա՞րդյոք իրենց երկրում նույնպիսի քննադատական մոտեցում տեղական լրատվամիջոցների նկատմամբ, որպիսին գոյություն ունի արևմտյան գլխական և փորձագլխական շրջանակներում:

3

37

ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ԷԹԻԿԱ

Լրագրողական էթիկայի մոտեցումները ժամանակի ընթացքում փոփոխությունների են ենթարկվել: Թյուր կարծիք կա, թե պատմականորեն դրանք գնալով ավելի վատթարացել են: Սակայն լրագրության պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գնալով ավելի են խստանում էթիկական այն սկզբունքներն ու չափանիշները, որոնք ակնկալվում են լրատվամիջոցներից, և որոնցով վերջիններս գնահատում են սեփական պրոֆեսիոնալիզմը:

Մյուս կողմից, էթիկան հաճախ ընկալվում է որպես մամուլի ազատության սահմանափակում: Հետխորհրդային շրջանում գործող լրագրողներն առավել ազատ են համարում 1990-ականների սկզբի մամուլը, երբ որևէ օրենք կամ մասնագիտական էթիկական կոդեքս չէր կաշկանդում նրանց գործունեությունը: Հետագա տարիներին օրենքները և կենսափորձը բարձրացրեցին նաև լրագրողական պատասխանատվության և հաշվետվողականության հարցեր, որոնք ոչ այնքան միանշանակ են ընդունվում լրագրողական հանրության կողմից: Ոմանք դա համարում են պրոֆեսիոնալիզմի կարևորագույն պայման, իսկ ուրիշները գտնում են, որ խոսքի ազատությունը պետք է գործի անվերապահորեն:

- Սակայն, ի՞նչ է խոսքի ազատությունը: Արդյո՞ք այն անսահմանափակ է:
- Երևի չկա մի երկիր, որի սահմանադրությունը չարգելի ատելության, թշամանքի և

խորականության քարոզը: Արդյո՞ք մենք՝ լրագրողներս, միշտ ենք հետևում սահմանադրական այս պահանջներին, արդյո՞ք չենք անտեսում դրանք, երբ խոսքը վերաբերում է նրան, ում թշնամի կամ հակառակորդ ենք համարում, արդյո՞ք զանազանում ենք խոսքի ազատության պահանջները ատելության քարոզ չանելու պահանջներից, արդյո՞ք անարդար ենք համարում բռնության զոհ դարձած կնոջը և բռնության կոչ անող նեոնացիստին հավասարապես հարթակ տրամադրելը:

Այո, լրագրողական էթիկան խոսքի ազատության այն սահմանն է, որը կոչված է լրագրությունը ծառայեցնել մարդկայնությանը (հումանիզմին):

Որպեսզի առավել ամբողջական լինի լրագրողական էթիկայի ընկալումը, այն հարկավոր է դիտարկել երեք տեսանկյունից՝ էմպիրիկ (պատմական փորձի), փիլիսոփայական (տեսական) և առկա մասնագիտական կանոնների և դրանց շուրջ ընթացող բանավեճերի (պրակտիկ) տեսանկյունից: Պատմական փորձը ցույց է տալիս, որ լրատվամիջոցները շարունակաբար ծառայեցվել են առևտրական, տնտեսական և քաղաքական շահերի, և թեև ժամանակի ընթացքում մշակվել են պրոֆեսիոնալ և էթիկական սկզբունքներ, գրվել են օրենքներ, մամուլը փողին և իշխանությանը ծառայեցնելու փորձերը շարունակվում են և հավանաբար կշարունակվեն միշտ: Ընդ որում, պարտադիր չէ, որ լրատվամիջոցը ֆինանսական կախում ունենա վերնախավից. շինծու սկանդալային նյութերով տպաքանակ սպառելը (համացանցի դեպքում՝ դիտումներ հավաքելը) կամ քաղաքական դերակատար դառնալու հավակնությունները վկայությունն են այն բանի, որ անգամ անկախ լրատվամիջոցը կարող է բարեխիղճ լրագրությանը ոչ հարիր միջոցներով ծավալել իր գործունեությունը: Հետաքրքիր է, որ մամուլի պատասխանատվության և հաշվետվողականության խնդիրն արժարժվում է ոչ միայն լրագրողական հանրության ներսում. այդ խնդիրներին անդրադառնում են նաև վերնախավերը, որոնք փորձում են վերահսկել և օգտագործել լրատվամիջոցները, քանի որ վերնախավերը հաճախ քննադատության են արժանանում մամուլի կողմից:

Մակայն էթիկական կանոնների մշակման առաջին նախաձեռնողները հենց լրագրողներն են եղել, ովքեր փորձել են բարեխիղճ լրագրության կանոններով պաշտպանել իրենց մասնագիտությունը: Այսօր գրեթե յուրաքանչյուր նորաստեղծ լրատվամիջոց կամ լրագրողական կազմակերպություն իր գործունեությունը սկսում է մասնագիտական էթիկական կոդեքս հաստատելով:

Ժամանակակից լրագրության աշխարհում արդեն իսկ կայացած սկզբունք է լուսաբանման բազմակողմանիությունը. խնդիրը պետք է ներկայացվի առնվազն երկու տեսանկյունից, գերադասելի է այնպիսի լուսաբանումը, որը պարունակում է նաև երրորդ՝ չեզոք աղբյուրից ստացված տեղեկություն կամ մեկնաբանություն: Սա լրագրության այբուբենն է, բայց ոչ միակ էթիկական պայմանը: Մեր ձեռնարկն առաջարկում է լրագրողական էթիկան դիտարկել, ելնելով մեկ հարցադրումից՝ **ինչին է ծառայում լրագրությունը**: Մենք էթիկական ենք համարում այն պատասխանը, որը նպատակամետ է **մարդկայնության** պաշտպանությանը: Այդպիսի պատասխաններ են՝ խաղաղությունը, լայն հասարակության բարեկեցությունը, խոցելի փոքրամասնությունների պաշտպանությունը:

նը, իշխանության և ռեսուրսների համաչափ բաշխումը, խոսքի իրավունքը, վերջապես՝ մարդու իրավունքներն ու ազատությունները և ժողովրդավարությունը:

Մամուլի էթիկայի մասին տեսական բանավեճերի մեջ չխորանալով, ներկայացնենք մի քանի հայտնի մոտեցումներ, որոնց օգնությամբ կարելի է կողմնորոշվել, թե ինչն է ընդունելի բարեխիղճ լրագրության մեջ, և ինչը՝ ոչ (Rodman, 2010).

<i>աբսոլյուտիստական մոտեցում</i>	<i>կատեգորիկ հրամայական</i> – էթիկական ուղենիշ, որը կիրառելի է բոլոր դեպքերում և իրավիճակներում,
<i>անգիտության վարագույր</i>	հավասար վերաբերմունք բոլորին՝ անկախ սոցիալ-տնտեսական հենքից. արդարությունը կույր է,
<i>հարաբերական կամ իրավիճակային էթիկա</i>	էթիկական ընտրությունը կատարվում է ըստ իրավիճակի՝ առանց կանոններ սահմանելու,
<i>ուկե միջին</i>	երկու ծայրահեղությունների միջև միջանկյալ դիրքորոշման ընդունումը,
<i>ուտիլիտար սկզբունք</i>	էթիկական է այն, ինչը նպաստավոր է մարդկանց մեծամասնության համար,
<i>մաքիավելիական էթիկա</i>	նպատակն արդարացնում է միջոցները,
<i>Լուսավորության դարաշրջանի էթիկա</i>	այն, ինչը լավ է քեզ համար, պետք է լավ լինի նաև ուրիշների համար:

Ուսուցանողը կարող է ըստ ցանկության քննարկման առարկա դարձնել այս և նման մոտեցումները՝ վիճարկելով դրանց էթիկականությունը: Կարելի է քննարկել, թե ինչու է այդքան հեշտ այդ կողմերսներն աբսոլյուտի հասցնել:

Էթիկական սկզբունքներին հետևելու համար անցյալում սահմանված էր գրաքննիչների ինստիտուտը, որը հաճախ ավելի շատ քաղաքական հսկողություն էր իրականացնում թողարկվող նյութի նկատմամբ, քան էթիկական կամ էսթետիկական: Հետագայում՝ սառը պատերազմի ավարտից հետո, գրաքննությունը վերացավ կամ կորցրեց իր երբեմնի նշանակությունը: Ներկայումս էթիկային հետևող ընդունելի մարմին է համարվում մամուլի օմբուդսմանի ինստիտուտը. լրատվամիջոցի աշխատակազմում գործում է մի մասնագետ, ով, քննելով հրապարակվող նյութը մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից, իր առաջարկներն է անում՝ այն էթիկական առումով բարելավելու համար: Լրատվամիջոցների աշխատանքի էթիկային հետևում են նաև այսպես կոչված «լրատվական խորհուրդները», ինչպես նաև այնպիսի հասարակական խմբեր, ինչպիսիք են լրագրողական և այլ հասարակական կազմակերպությունները, հետազոտական հաստատությունները: Սակայն վերջիններս ազդում են լրատվական հրապարակումների վրա ոչ անմիջապես և ոչ ուղղակիորեն: Հայաստանում այս կարգի հայտնի կազմակեր-

պություններ են Երևանի մամուլի ակումբը, Գյումրիի «Ասպարեզ» լրագրողական ակումբը, Մեղիա նախաձեռնությունների կենտրոնը և այլ ՀԿ-ներ, որոնք ուսումնասիրում են լրատվամիջոցների թողարկած նյութերի բովանդակությունը, հանդես են գալիս դիտողություններով և առաջարկություններով, կազմակերպում են թեմատիկ դասընթացներ և կոնֆերանսներ:

Պարապմունքի նպատակը

Այս մասի նպատակն է ամրապնդել լրագրողների՝ հակամարտությունների լուսաբանման ժամանակ լրագրողական էթիկային հետևելու անհրաժեշտության գիտակցումն ու պարտավորությունը: Ծանոթանալով միջազգային և տեղական օրինակելի մասնագիտական էթիկական կանոններին, մասնակիցները պիտի կազմեն իրենց պայմանական էթիկական կոդեքսը և ստորագրեն: Այն կարող է հետագա մշակման ենթարկվել, սակայն կարևոր է, որ լրագրողները դասընթացից հեռանան որոշակի էթիկական սկզբունքներով զինված:

Երրորդ մասի ենթաթեմաները

«Հակամարտությունների առկայության պարագայում մամուլի էթիկայի խնդիրները» թեման արդյունավետ կերպով քննարկելու համար նախատեսվում է սեմինար պարապմունք հետևյալ ենթաթեմաների շուրջ.

- «Լրագրողական էթիկա»
- «Էթիկայի կանոնագիրք»

Մեմինարին ներկայացվում են միջազգային և տեղական օրինակելի մասնագիտական էթիկական կանոններ, մասնակիցները սեփական պայմանական էթիկական կոդեքս են կազմում և ստորագրում:

I. Լրագրողական էթիկա

Այս բաժնի նպատակն է լրագրողներին ներկայացնել ինքնակարգավորման մեխանիզմները, որոնք ընդունված են առաջավոր աշխարհում: Մեմինար պարապմունքների մեր փորձը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է լրագրողներին ծանոթացնել լրագրողական էթիկայի որոշ հիմնարար դրույթներին և ընկալումներին. սա կարևոր է հետագոտվող նյութը էթիկայի տեսանկյունից դիտարկելու և սեփական սկզբունքները մշակելու համար:

Պարապմունքի առաջարկվող կառուցվածքը.		
Տևողությունը՝ 90 րոպե:		
Անհրաժեշտ պիտույքները՝ լափթոփ, պրոյեկտոր, թուղթ և մարկերներ, լվացքի պարան՝ գունավոր ամրակներով		
1	«Ի՞նչ է էթիկան» PPT մատուցում	20 րոպե
2	«Լվացք» խաղ	20 րոպե
3	«Ճնշում» դերային խաղ	20 րոպե
4	«Իմ անձնական էթիկական կոդեքսը» վարժություն	15 րոպե
5	Լրագրողի միջազգային մասնագիտական էթիկական կանոնների ներկայացում	15 րոպե

Ի գիտություն

Ջանգվածային լրատվության միջոցները հաճախ անվանում են «չորրորդ իշխանություն», քանի որ ՋԼՄ-ների ազդեցությունը մեծ է լայն հասարակության վրա: Այդ իշխանությունը, սակայն, ենթադրում է նաև պատասխանատվություն և հաշվետվողականություն հասարակության առջև, քանի որ տեղեկությունների և մեկնաբանությունների որակն ու ծավալը, պարբերականությունն ու մատուցման ոճը կարող են պայմաններ ստեղծել ինչպես մարդու հիմնարար ազատությունների և իրավունքների իրականացման, այնպես էլ՝ անհարկի սահմանափակման համար:

Վիճաբանություններն այն մասին, թե որտեղ է ավարտվում խոսքի ազատությունն ու սկսվում մամուլի էթիկան, շարունակվում են: Դրա վառ օրինակը 2005-ի սեպտեմբերին դանիական թերթերից մեկում հրապարակված՝ Մուհամեդ մարգարեի ծաղրանկարների շուրջ հանրային բանավեճն էր, որը բավական սուր բնույթ ստացավ աշխարհում՝ ուղեկցվելով մուսուլմանների պիկետներով և ցույցերով: Մինչ թերթի խմբագրությունը համոզված էր, որ իրականացրել է խոսքի ազատության իր իրավունքը, մուսուլման ընդդիմա-

խոսները գտնում էին, որ ծաղրանկարները վիրավորում են իրենց կրոնական զգացմունքները, ոչ միայն այն պատճառով, որ պատկերներն ունեն սատիրիկ բնույթ, այլև ելնելով այն հանգամանքից, որ իսլամում առհասարակ արգելվում է Մուհամեդի և այլ անձանց վիզուալ պատկերումը: Հետաքրքիր է, որ ծաղրանկարները հրապարակվել են անստորագիր՝ ըստ երևույթին, կանխատեսելով անխուսափելի քննադատությունը: Այս խնդրի շուրջ քննարկումներն այդպես էլ չհանգեցրին նման իրավիճակներում լրատվամիջոցի կողմից այնպիսի վարքի մոդելի սահմանման, որն ընդունելի լիներ թե՛ լրատվամիջոցի, և թե՛ հավատացյալների համար:

Առավել ողբերգական արձագանք ունեցավ 2012 թ-ին գրեթե սիրողական հակաիսլամական մի ֆիլմի տեղադրումը Youtube-ում: Հարյուր հազարավոր մուսուլմաններ տարբեր երկրներում դուրս եկան բողոքի ցույցերի՝ այրելով դրոշներ, հարձակումներ գործելով օտարերկրացիների վրա. գազաթնակետը եղավ Լիբիայում ԱՄՆ հյուպատոսի սպանությունը: Չնայած այդ հետևանքներին, «Գուգլը» հրաժարվեց հեռացնել ֆիլմն իր էջերից՝ պատճառաբանելով, որ դա կլիներ ազատ արտահայտման սկզբունքի ոտնահարում:


Ուսուցանողի ուղեցույց

Իննսուն րոպեանոց սեմինար պարապմունքի ընթացքում ներկաները նախնական պատկերացում են ստանում լրագրողական էթիկայի վերաբերյալ: Ուսուցանողին խորհուրդ է տրվում պարապմունքն անցկացնելուց առաջ ծանոթանալ նաև համապատասխան հավելվածներին: Եթե նա հարմար է գտնում, իհարկե, կարող է նաև ավելացնել կամ պակասեցնել տարբեր հատվածներ, փոփոխություններ կատարել պարապմունքներում:

1. Ի՞նչ է էթիկան

Ուսուցանողը PPT մատուցման միջոցով մասնակիցներին ներկայացնում է (20 րոպե) լրագրողական էթիկայի մասին համառոտ ակնարկ և պատասխանում նրանց հարցերին: Վերջում ուսուցանողը կարող է առաջարկել քննարկել, թե կա՞ն արդյոք լրագրողների համար անձեռնմխելի թեմաներ:

Այդ նպատակով կարելի է մատուցումից հետո գրատասխտակին կամ ֆլիպչարթի վրա գծել քառակուսի, բաժանել այն չորս մասի, վերնագրել հորիզոնական և ուղղահայաց սյունակները՝ ինչպես պատկերված է աղյուսակում: Մասնակիցներին առաջարկվում է ամբողջությամբ մգացնել այն վանդակ(ներ)ը, որ իրենց կարծիքով պիտի անձեռնմխելի մնա(ս) իրենց համար, սպիտակ թողնել այն վանդակ(ներ)ը, որ իրենց կարծիքով ամբողջությամբ ենթակա է (են) լուսաբանման, և գծիկներով ծածկել այն վանդակ(ներ)ը, որ կարծում են մասամբ է (են) ենթակա լուսաբանման: Օրինակ, ի՞նչն է ենթակա լուսաբանման, երբ որևէ պաշտոնյայի անձնական նավը մխրճվում է հանրային լողափ: Արդյունքում ստացվում է ստորև նկարագրված պատկերը:



2. «Լվացք» խաղ

Խաղի նպատակն է վերհանել և քննարկել հասարակության կյանքում հանդիպող հիմնական էթիկական խնդիրները: Հատկացվում է 20 րոպե:

Մասնակիցները թղթերի վրա գրի են առնում իրենց ամենօրյա լրագրողական աշխատանքում հանդիպող էթիկական խոչընդոտները և թղթի թերթերը ամրակներով կախում լվացքի պարանից: Վարժությունը կարելի է անցկացնել առանց պարանի՝ թղթերը պարզապես պատին ամրացնելով կամ ընթերցելով: Որպես խոչընդոտ կարող

են հիշատակվել խմբագրի, գովազդային բաժնի, պաշտոնյաների և այլոց կողմից կիրառվող ճնշումները լրագրողների վրա, երբ վերջիններից պահանջվում է կյու-թեր գրել և լուրերը ներկայացնել ղեկավարության համար շահավետ ձևով: Երբ «վացքը փոված է», մասնակիցները սկսում են քննարկել, թե որքանով է տվյալ խնդիրը լուրջ, հնարավոր է, արդյոք, այն հաղթահարել, ունեցե՞լ են, արդյոք, իրենք նման փորձ: Ուսուցանողն առաջարկում է, որ մասնակիցներն իրենք պատասխանեն բարձրացված հարցերին և խորհուրդներ տան միմյանց: Արդյունքում վեր են հանվում այն խնդիրները, որոնք խոչընդոտում են էթիկապես բարեխիղճ լուսաբանումը: Քննարկման արդյունքները կարող են օգտագործվել հաջորդ՝ «Ճնշում» խաղում:

3. «Ճնշում» դերային խաղ

Ուսուցանողի առաջարկությամբ տեղական հեռուստաընկերության լրատվական թողարկման հաղորդավարի դերում ընտրվում է մի մասնակից, ով համեմատաբար փորձառու է կամ համարում է, որ իր հավատարմությունը լրագրողական էթիկային դժվար է սասանել: Մնացած մասնակիցները բաժանվում են խմբերի:



Ա. իշխանություններ, քաղաքական գործիչներ, իրավապահներ, ազգային անվտանգության աշխատողներ,

Բ. մրցակից լրագրողներ/լրատվամիջոցներ,

Գ. խմբագիրներ, որոնցից մեկը հակառակորդ երկրի ներկայացուցիչ է,

Դ. առևտրային կառույցներ,

Ե. շահագրգիռ հասարակություն (մեդիա լսարան),

Զ. ինքնագրաքննություն:

Եթե վարժությունում ի հայտ են եկել հավելյալ խոչընդոտող խմբեր, այս ցանկը կարող է լրացվել: Առաջարկվում է հետևյալ իրավիճակը. «հաղորդավարը» տեսանյութ է նկարահանում տեղական մի հասարակական կազմակերպության հրավերով հակամարտող երկրից հյուր եկած հասարակական կազմակերպությունների պատվիրակության մասին: Հյուրերն այցելում են տեղի ոգելից խմիչքներ արտադրող մի գործարան և, առաջին բաժակը փորձելուց հետո, հյուրերից մեկը հայտարարում է, թե երկու ժողովուրդների միջև խնդիրներ չկան և հնարավոր է փոխշահավետ պայմաններով մոտ ժամանակներում լուծել հակամարտությունը: Հաղորդավարն անկեղծորեն հայտնում է, որ հյուրը դուր եկավ իրեն և ներկայներին ու ասում է, որ լավ կլիներ «մեր երկրում էլ լինեին այսպիսի համարձակ և


անկեղծ ելույթներ»։ Ռեպորտաժը շարունակվում է՝ պատմելով, որ այդտեղ ներկա մի քաղաքական գործիչ հյուրին հակադարձել է. «Անշուշտ, մենք կարող ենք հեշտությամբ հանգուցալուծել բոլոր խնդիրները, միայն մնում է որոշել, թե ո՞ր պայմանները կարող են մեզ համար փոխշահավետ լինել»։ Հաղորդավարը պատմում է. «Իրավիճակը սկսեց լարվել, քանի որ հյուրերը և տեղացիները սկսեցին ներկայացնել հակամարտության կարգավորման վերաբերյալ առաջարկների իրենց տարբերակները, որոնք, ինչպես և սպասվում էր, շատ հակասական էին։ Դե պարզ բան է, չէ՞ որ այսքան տարվա ընթացքում ոչ մի քաղաքական գործչի կամ դիվանագետի չի հաջողվել առաջարկել կարգավորման այնպիսի տարբերակ, որը կբավարարեր բոլոր կողմերին։ Լարված մթնոլորտը կարողացավ մեղմել գործարանի տնօրենը, ով առաջարկեց բոլոր հարցերը լուծել սեղանի շուրջ՝ լավ խմիչքի առկայությամբ։ Ավելին, նա առաջարկեց հյուրերին՝ հավանած արտադրանքը սկսել արտահանել իրենց երկրներ։ Այդ միտքը դուր եկավ ոչ միայն հյուրերին, ովքեր ակնհայտորեն լավ տրամադրություն ունեին, հնարավոր է՝ նաև ավրոհույի ազդեցությամբ, այլև մյուս տեղական արտադրությունների ղեկավարներին, ովքեր ևս հրավիրված էին այդ հանդիպմանը»։ Ռեպորտաժն ավարտվում է սթենդ-ափով՝ գործարանի կողքին։ «Շրջայցի ավարտին հյուրերին իսկապես հրավիրեցին մառաններից մեկում բացված սեղանի շուրջ։ Լրագրողներին այդ սեղանի մոտ չհրավիրեցին, այնպես որ մենք չենք կարող ձեզ հաղորդել, թե ինչի՞ շուրջ կարողացան համաձայնության գալ տեղական ՀԿ-ների ներկայացուցիչներն ու գործարանի ղեկավարությունը։ Բայց դե ցանկալի կլիներ իմանալ...»

Խմբերը, ելնելով դերերով իրենց վերագրված շահերից, պետք է տան հարցեր ու փորձեն ազդել «հաղորդավարի» վրա, փորձեն հասնել նրա կողմից հերքման, տեքստի փոփոխության, ռեպորտաժի ցուցադրությունը փորձեն խոչընդոտել։ Խմբերը պետք է կարողանան հիմնավորել իրենց պահանջները։ Մասնակիցը՝ «հաղորդավարը», կարող է ինքը ցույց տալ իր տեքստում առկա սխալները, բացատրել, ինչ ինքը չափտի գրեր, ինչպես կարելի է խմբագրել տեքստը, որպեսզի այն համապատասխանի էթիկայի չափանիշներին։ Ուսուցանողը հարցերով ցույց է տալիս, թե ինչի վրա կարելի է ուշադրություն դարձնել, և արդյունքում ստեղծվում է մի իրավիճակ, որում կարող են կվերհասնվել առկա բոլոր «ստորջրյա խութերը»։

4. «Իմ անձնական էթիկական կողերքը»

վարժություն

Ուսուցանողն առաջարկում է յուրաքանչյուր մասնակցին թղթի վրա գրի առնել այն սկզբունքները, որոնց ինքը հետևում է իր ամե-



նօրյա լրագրողական աշխատանքում: Թղթերը փակցվում են պատին: Վարժությունը տևում է 15 րոպե: Այն, կարելի է ասել, միջազգային մասնագիտական էթիկական կոդեքսին ծանոթացման ներածություն է և փոքրիկ նախավարժանք սեմինարի վերջում նախատեսվող՝ «էթիկայի հանձնառություն» պարապմունքի համար: Այդ սկզբունքների գրառումը կարող է լինել նաև նկարում պատկերված ձևով:

5. Միջազգային մասնագիտական էթիկական կանոնների ներկայացում

Ձեռնարկի հավելվածներում կարող եք գտնել «Ազատություն» ռադիոկայանի և BBC-ի մասնագիտական էթիկական կանոնները (տես՝ Հավելվածները): Դրանք կարելի է ներկայացնել բանավոր, բայց եթե ուսուցանողն ավելի նպատակահարմար է գտնում, կարող է պատրաստել փոքրիկ PPT մատուցում:

II. Էթիկայի կոդեքս

Այս բաժնի նպատակն է ամրապնդել դասընթացի մասնակիցների գիտելիքները ինչպես լրագրողական էթիկայի, այնպես էլ լրագրողի վրա գործադրվող հնարավոր ճնշումները չեզոքացնելու հնարավորությունների մասին, ի մի բերել էթիկական այն կանոնները, որ առաջարկել են հենց պարապմունքի մասնակիցները և դրա հիման վրա ստորագրել էթիկայի կոդեքսը:

Պարապմունքի առաջարկվող կառուցվածքը.

Տևողությունը՝ 100 րոպե:		
Անհրաժեշտ պիտույքներ՝ թուղթ և գրիչ, ֆլիպ չարտ և մարկերներ, համակարգիչ և պրինտեր, պրոյեկտոր		
1	Օրինակելի մասնագիտական էթիկական կանոնների ներկայացում	30 րոպե
2	Էթիկայի կոդեքսի կազմում	30 րոպե
3	Ստորագրում	10 րոպե
4	Քննարկում խմբագիրների մասնակցությամբ	30 րոպե

Ի գիտություն

Լրագրողական գործունեության ընդհանուր օրենսդրական կարգավորմանը զուգընթաց գործում են նաև ինքնակարգավորման մեխանիզմներ, որոնք կոչված են մամուլում պրոֆեսիոնալ էթիկայի սկզբունքներին և չափանիշներին համապատասխան լուսաբանում ապահովելու: Այդպիսի մեխա-

նիզմներից է լրագրողական էթիկայի կոդեքսը, որ ստանձնում է տվյալ լրատվամիջոցը՝ սահմանելով իր լրագրողների պրոֆեսիոնալ գործունեության կանոնները և ստանձնելով որոշակի պատասխանատվություն՝ էթիկայի կանոնների պահպանման համար: Այդ կանոնները յուրաքանչյուր լրատվամիջոց ինքնուրույն է ընդունում, բայց դրանց

հիմնարար դրույթները նույնն են գրեթե բոլոր դեպքերում, օրինակ՝ բազմակողմանի լուսաբանում, աղբյուրների ստուգում և այլն:

Էթիկայի կանոններ են սահմանվում հաճախ նաև լրատվամիջոցների միջև լրագրողական համատեղ ծրագրեր իրականացնելիս, հատկապես, երբ խոսքը վերաբերվում է հակամարտող երկրների լրատվամիջոցների միջև համատեղ աշխատանքին: Դա օգնում է ստեղծել համագործակցության այնպիսի մթնոլորտ, որում կանխվում է փոխադարձորեն անընդունելի լուսաբանման մեթոդների կիրառումը: Էթիկական ինքնակարգավորման մեկ այլ մեխանիզմ է էթիկայի կանոններն իր մեջ ընդգրկող աշխատանքային պայմանագիրը, որը լրագրողին պարտավորեցնում է լուսաբանումն իրականացնել այդ կանոնների շրջանակներում:

Էթիկական կանոնների սահմանումը բնորոշ է ժամանակակից պրոֆեսիոնալ լրատվամիջոցներին: Միջազգայնորեն օրինակելի են BBC-ի և «Ազատություն» ռադիոկայանի լրագրողական մասնագիտական էթիկական կանոնները (տես՝ Հավելվածները), որոնք համապարփակ կերպով ներկայացնում են էթիկայի հիմնական հայեցակարգը: Այդպիսի մի կոդեքս մշակվել է նաև Երևանի մամուլի ակումբի նախաձեռ-

նությամբ¹ 2007 թ. խորհրդարանական ընտրություններից առաջ: «ԶԼՄ-ների ներկայացուցիչների կոդեքսին» (տես՝ Հավելվածները) և դրան կից «Ընտրությունների և հանրաքվեների լուսաբանման սկզբունքների վերաբերյալ Հոչակագրին» միացել է 48 լրատվամիջոց և սատարել է 9 լրագրողական միություն: Նրանց և այլ սուբյեկտների միջև վեճերն արտադատարանական կարգով լուծելու համար ստեղծվել է Էթիկայի դիտորդ մարմինը, որի որոշումները պարտադիր են կոդեքսը ստորագրած լրատվամիջոցների համար: ԵՄԱ-ի աշխատակիցները նույնպես ունեն իրենց մասնագիտական էթիկական կոդեքսը, որը կներկայացվի այս պարապմունքի ընթացքում:

Վերջին շրջանում էթիկական կանոններ են ստորագրում նաև «քաղաքացիական լրագրողները»՝ բլոգերները և սոցիալական ցանցերի օգտատերերը: Այդպիսի մի օրինակ է ամերիկյան «Առցանց նոր ընկերակցության» «Բլոգերների կոդեքսը», որը հիմնված է «Պրոֆեսիոնալ լրագրողների հասարակության» նույնատիպ վարքականոնի վրա (Baran, J.S. & Davis, D.K., 2009): Ցանկության դեպքում կարելի է մասնակիցներին ծանոթացնել նաև «քաղաքացիական լրագրության» էթիկայի սկզբունքներին:

1 Տես՝ ԵՄԱ-ի կայքում «ԶԼՄ-ների ինքնակարգավորման նախաձեռնություն» — http://www.ypc.am/self_regul/in/am

Ուսուցանողի ուղեցույց

1. Օրինակելի մասնագիտական էթիկական կանոնների ներկայացում

Ուսուցանողը մասնակիցներին է ներկայացնում մի քանի կանոն, որոնք օրինակելի են համարվում միջազգային և տեղական լրագրողական միջավայրում: Այդպիսիք կարող են համարվել BBC-ի և «Ազատություն» ռադիոկայանի էթիկայի կանոնագրքերը, Երևանի մամուլի ակումբի մասնագիտական էթիկական կոդեքսը, որոնք զետեղված են ձեռնարկին կից հավելվածներում: Ուսուցանողը կարող է ընտրել նյութը ներկայացնելու այն եղանակը, որը գերադասելի է համարում: Եթե ընտրում է PPT մատուցումը, ապա կարող է ներկայացնել ինչպես յուրաքանչյուր կոդեքսն առանձին և ամբողջությամբ, այնպես էլ ըստ էթիկական սկզբունքների, որոնք տեղ են գտել մասնագիտական էթիկայի բոլոր կոդեքսներում (հղելով հեղինակներին): Այս ներկայացման համար ավստո չէ ծախսել 30 րոպե, քանի որ օրինակելի կանոններին տեղեկանալը պիտի օգնի մասնակիցներին՝ կազմել սեփական կանոնները:

2. Էթիկայի կոդեքսի կազմում

Ուսուցանողն առաջարկում է մասնակիցներին բաժանվել 3-4 խմբի (խմբերը համարներ են ստանում) և յուրաքանչյուր խմբում կազմել սեփական մասնագիտական էթիկայի կոդեքսը: Եթե լսարանի կազմը բազմազգ է, ցանկալի է, որ խմբերը նույնպես բազմազգ լինեն:

Խմբերին առաջարկվում է 10 րոպեում թղթի վրա գրի առնել այն էթիկական սկզբունքները, որոնց նրանք պատրաստ են հետևել իրենց աշխատանքում, հատկապես հակամարտությունների և հակամարտող կողմերի մասին լուսաբանումներ կատարելիս: Դրանից հետո ուսուցանողը խնդրում է հերթով ընթերցել յուրաքանչյուր խմբում կազմված էթիկական կանոնների ցանկը և դրանք գրի է առնում կամ ֆլիպչարտի վրա կամ անմիջապես համակարգչում, որի էկրանը պրոյեկտորի միջոցով տեսանելի է բոլոր մասնակիցներին: Կանոնները գրի առնելիս ուսուցանողն անտեսում է կրկնվող կետերը, իսկ ըստ անհրաժեշտության արդեն նշված կետը փոխարինում նորով, եթե այն ավելի ամբողջական և ճշգրիտ է ձևակերպում լրագրողական էթիկայի տվյալ սկզբունքը: Ցուրաքանչյուր կետի դիմաց գրվում է այն խմբի կամ խմբերի համարները, որոնք առաջարկել են տվյալ սկզբունքը: Այս առաջադրանքի կատարումն ընդհանուր առմամբ տևում է 30 րոպե:

3. Էթիկայի կոդեքսի ստորագրում

Ուսուցանողը ներկայացնում է մասնակիցների առաջարկներից կազմված կոդեքսը և խնդրում ստորագրել այն: Եթե մասնակիցները չեն համաձայնում ստորագրել, ուսուցանողը հանում է այն սկզբունքները, որոնք առաջարկվել էին միայն մեկ խմբի կողմից և նորից է առաջարկում ստորագրել: Եթե նորից համաձայնություն չի ստանում, հանում է երկու և պակաս անգամ հիշատակված առաջարկները, իսկ եթե իրավիճակը կրկնվում է, թողնում է միայն այն սկզբունքները, որոնք առա-

ջարկվել էին պարպմունքին մասնակցած բոլոր խմբերի կողմից և նորից առաջարկում է ստորագրել: Այս դեպքում հավանականությունն ավելի մեծ է, որ բոլորը կամ գոնե մեծամասնությունը կստորագրեն: Սակայն ուսուցանողը պետք է պատրաստ լինի այն բանին, որ մասնակիցները կարող են հրաժարվել նաև այդ տարբերակը ստորագրելուց:

4. Քննարկում

Հաջորդ փուլում մասնակիցները քննարկում են իրենց իսկ կազմած մասնագիտական էթիկական կողեքսը ստորագրելու և չստորագրելու պատճառները: Ցանկալի է, որ քննարկմանը մասնակցեն նաև լրատվամիջոցների ղեկավարները և պատասխանատու խմբագիրները: Ուսուցանողը պետք է խնդրի քննարկման մասնակիցներին ներկայացնել այն օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները, որոնք խոչընդոտում են լրագրողական էթիկայի սկզբունքներին հավատարիմ մնալուն: Այնուհետև պետք է նրանց դիմի հարցերով՝ արդյո՞ք այդ սկզբունքներին չհետևելը կարող է վնասակար լինել բարեխիղճ լրագրության և խաղաղության համար, ինչպիսի՞ սկզբունքներ են ընդունելի մասնակիցների համար և արդյո՞ք դրանց կիրառումը կարող է դրական փոփոխությունների հանգեցնել, ինչպե՞ս հաղթահարել խոչընդոտները և հավատարիմ մնալ լրագրողական էթիկային՝ հակամարտություններն ու հակամարտող կողմերի իրադարձությունները լուսաբանելիս: Հնարավոր է, որ մասնակիցները, ելնելով իրենց բացասական փորձից, խոսեն դժվարությունների և փակուղիների մասին: Որպեսզի խոսակցությունը կառուցողական և արդյունավետ լինի, ուսուցանողը պետք է մասնակիցներին ուղղորդի խոսելու երկու հակամարտող կողմերի միջև առկա դրական փորձի մասին և այն մասին, թե մասնակիցներն իրենց կողմից ինչ են պատրաստ անելու իրավիճակը դրական ուղղությամբ փոխելու համար:

Որպես ամփոփում

Ձեռնարկը նախատեսված է հակամարտություն լուսաբանող լրագրողների համար դասընթացներ և սեմինար պարապմունքներ կազմակերպողների համար: Այն նպատակ ունի լրացնելու լրագրողների գիտելիքներն ու հմտությունները հակամարտությունների բարեխիղճ և անաչառ լուսաբանման աշխատանքում:

Ձեռնարկը հագեցած է անհրաժեշտ տեղեկություններով, իսկ հավելվածներում տրված են պարապմունքների համար հարկավոր նյութերը: Անհրաժեշտության դեպքում Եվրասիա համագործակցություն հիմնադրամը պատրաստ է լրացուցիչ նյութեր տրամադրել ուսուցանողներին:

Հույս ունենք, որ ձեռնարկն իր համեստ ներդրումը կունենա հակամարտությունների պրոֆեսիոնալ լուսաբանման գործում և կծառայի հակամարտող երկրների բազմաթիվ լրագրողների, ինչպես նաև նրանց հասարակությունների՝ տեղեկատվության իրավունքի իրականացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Bagdikyan, B. (2000). *The Media Monopoly*. Boston: Beacon Press.
- Baran, J.S. & Davis, D.K. (2009). *Mass Communication Theory: Foundations, Ferment, and Future* (5th ed.). Boston, USA: Wadsworth Cengage Learning.
- Entman, R. M. (2004). *Projections of power: Framing news, public opinion and U.S. foreign policy*. Chicago: University of Chicago Press.
- Freire, P. (2010). *Pedagogy of the Oppressed*. New York, NY: Continuum.
- Hall, S. (1997). The Spectacle of the Other:. In Hall, *Representations. Cultural Representations and Signifying Practices*. (pp. 223-279). London: Sage & Open University.
- Haslam, S. T. (1997). The Group as a Basis for Emergent Stereotype Consensus. *European Review of Social Psychology*, 8(1), 203-239.
- Herman, E. &. (2002). *Manufacturing Consent: The Political Economy of the Mass Media*. New York: Pantheon Books.
- Keen, S. (n.d.). *Faces of the Enemy: Reflections of the Hostile Imagination*. Retrieved from http://www.zengermedia.com/pdf/CAT100_Guide.pdf
- Klein, A. G. (2009). Counterframing public dissent: An analysis of antiwar coverage in the U.S. media. *Critical Studies in Media Communication*, 26(4), 331-329.
- Lewis, S. C. (2009). What is the War on Terror: Framing through the eyes of journalists. *J&MC Quarterly*, 86(1), 85-102.
- McGarty, Craig; Yzerbyt, Vincent Y.; Spears, Russel (2002). Social, cultural and cognitive factors in stereotype formation. *Stereotypes as explanations: The formation of meaningful beliefs about social groups*. Cambridge: Cambridge University Press.
- Merskin, D. (2004). The construction of Arabs as enemies: Post-September 11 discourse of George W. Bush. *Mass Communication & Society*. 7(2), 157-175.
- Rodman. (2010). *Mass Media in a Changing World: History, Industry, Controversy* (3rd ed.). New York, NY: The McGraw-Hill Companies, Inc.
- Said, E. W. (1997). *Covering Islam: How the Media and the Experts Determine How We See the Rest of the World*. New York: Vintage Books.
- Thomas, K. W. (1992). Conflict and conflict management: Reflections and update. *Journal of Organizational Behavior*, 13, 265-274.
- Yeritsyan, G. (2012, February 1). The Impact of Armenian-Turkish Bilateral Projects and Initiatives on Young People. Yerevan.
- Երևանский пресс-клуб и “Ени несил”. (2010). Армяно-Азербайджанские отношения в медиа Армении и Азербайджана.
- Исследовательский центр “Регион” Журналистов-Расследователей. (2005). *Армения и Азербайджан на перепутье “ни мира, ни войны”:* Как преодолеть стереотипы. Ереван: Ван Арьян.
- Արսաւ, Ա., Արդուվահարով, Ս., Արդուվան, Ա., Ասադով, Ս., Բեգիրջան, Խ., Բերիս, Ս., Սարտիրոսյան, Ն., Սարգիզով, Ջ., Խարաշվիլի, Յ. (2006). «Խաղաղության և գենդերի ուսուցում». Երևան: UNIFEM.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Բառարան

Ապամարդկայնացում – Անհատի կամ խմբի նկատմամբ չհիմնավորված կամ միտումնավոր այնպիսի դիրքորոշում, որն անհատին կամ խմբին ներկայացնում է որպես բացասականորեն տարբերվող օբյեկտ՝ զուրկ մարդկային հատկանիշներից, ուստի և անարժան կարեկցանքի:

Այլատյացություն – անհատի կամ խմբի կողմից չհիմնավորված մերժողական վերաբերմունք այլ անհատների կամ խմբերի նկատմամբ:

Առաջնային աղբյուր – տեղեկությունների աղբյուր, որն ինքն է մասնակցել տվյալ տեղեկության առարկա հանդիսացող իրադարձությանը կամ իրականությանը: Օրինակ՝ հանրային գործիչները:

Երկրորդային աղբյուր – տեղեկությունների աղբյուր, որը չի մասնակցել տվյալ տեղեկության առարկա հանդիսացող իրադարձությանը կամ իրականությանը, բայց այն ներկայացնում է հանրությանը իր տեսանկյունից: Օրինակ՝ լրատվամիջոցները:

Էթիկա – բարոյագիտական հասկացություն, որը ներկայացնում է ուղեցույց անհատների կամ խմբերի համար՝ բարու և չարի, լավի և վատի մասին:

«Թշնամու կերպար» – անհատի կամ խմբի պատկերացումը այլ անհատի կամ խմբի մասին՝ որպես օտարված, ապամարդկայնացված, դիմազուրկ առարկայի, որը վտանգ է ներկայացնում և արժանի է միայն բարոյական կամ ֆիզիկական ոչնչացման, արժանի չէ կարեկցանքի:

Լրագրողական էթիկա, կամ *մամուլի էթիկա* (media ethics) – էթիկական այն սկզբունքներն ու չափանիշները, որոնք լրագրողներն ու լրատվամիջոցները *կամավոր* հանձն են առնում կիրառել իրենց պրոֆեսիոնալ գործունեության մեջ:

Կարծրատիպ – ստերեոտիպ, երևույթի մասին ընդհանրացված պարզունակ ընկալում, որը տարածված է լայն շրջանակներում: Հակառակ քննախույզ մոտեցման՝ մարդը մի երևույթ հասկանալու համար ոչ թե տեղեկություններ է հավաքում և վերլուծում այդ երևույթը, այլ որդեգրում է շրջապատում լսած ամենապարզունակ բացատրությունը՝ կարծրատիպը այդ երևույթի մասին (օրինակ՝ «ծերերը պահպանողական են», մինչդեռ ակնհայտորեն բազմաթիվ են առաջադեմ տարեցները):

Կոնֆլիկտ – տես՝ «Հակամարտություն»:

Հակամարտություն – միջխմբային կամ միջանձնային պայքար սեփական մոտեցումների և շահերի (գեր)իշխանության համար:

Մամուլագիտություն – տես՝ «Մեդիա գիտություններ»:

Մամուլի էթիկա – տես՝ «Լրագրողական էթիկա»:

Մեդիա – մեդիա բառն այստեղ կիրառվում է առանց թարգմանության՝ նկատի ունենալով բառի արևմտյան ըմբռնումը. այն ընդգրկում է տեխնիկական բոլոր հնա-

րավոր, այդ թվում՝ էլեկտրոնային և տպագիր միջոցները, որոնք զանգվածաբար տարածում են տեղեկություններ, սկսած ֆիլմերից, գրքերից մինչև հեռուստատեսային հեռարձակում:

Մեդիա գիտություններ – Մեդիա գիտությունները հասարակական գիտություն է, գիտական-հետազոտական այն դիսցիպլինը, որն ուսումնասիրում է լրատվամիջոցներն ու այլ մեդիան՝ թե՛ բովանդակային, թե՛ տեխնիկական, թե՛ քաղաքական և տնտեսական տեսանկյուններից՝ երևակելով դրանց դերն ու ազդեցությունը հասարակությունում և այս կամ այն իրադարձությունների կամ հանրային դիսկուրսի ձևավորման գործում:

Մեդիա լաբրան – տարատեսակ լրատվամիջոցների (ավանդական և նոր՝ անցանց) արտադրանքը սպառող ազգաբնակչություն; [հեռուստադիտողների, [ռադիո] ունկնդիրների և ընթերցողների ընդհանուր հավաքականությունը

Նախապաշարմունք – կանխակալ պատկերացում անձանոթ երևույթի կամ անձանց մասին, որը հիմնավորված չէ սեփական կենսափորձով և գիտելիքներով

Կլիշե – համընդունելի բառապաշարում կրկնվող բառեր կամ արտահայտություններ, որոնք զրկվել են իրենց նախնական իմաստից և կիրառվում են ոչ թե ընտրությամբ, այլ համընդունելի բառապաշարի ազդեցությամբ: Օրինակ՝ «Քիչ ենք, բայց հայ ենք», «Թուրքը մտում է թուրք» և այլն:

Սոց. ցանցեր – Այստեղ՝ նշանակում է ինտերնետում առկա սոցիալական ցանց հանդիսացող կայքեր

«Ուրիշ» – «ուրիշ» կամ «այլ ոմն» անհատի կամ խմբի մասին այն ընկալումը, որը հիմնված է ընկալողի և «ուրիշի» միջև տարբերությունների վրա՝ ի վնաս վերջինի, ինչի արդյունքում «ուրիշը» օտարվում է ընկալողի «ես»-ից, ընկալողի համար դառնում օտար և անճանաչելի:

Հավելված 2. Հապավումներ

ԵԱՀԿ – Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհուրդ

ԵԽ – Եվրոպայի խորհուրդ

ԵԽԽՎ – Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով

ԵՀՀ – Եվրասիա համագործակցություն հիմնադրամ

ԵՄ – Եվրոպական միություն

ԵՄԱ – Երևանի մամուլի ակումբ

ԶՈՒ – Զինված ուժեր

ՄԱԿ – Միավորված ազգերի կազմակերպություն

Հավելված 3. Ֆիլմեր

- «Խաղաղության և պատերազմի միջև»
- «Մուսուլմանի հետ նման բան չպիտի պատահեր»
- «Ուղղագրության կանոններ»
- «Կամուրջ վադիի վրա»
- «Թշնամու կերպարը»

Հավելված 4. Բաժանվող նյութեր

1. Առաջարկվող օրակարգը
2. «Լրագրողի էթիկան» PPT մատուցում, Նաիրա Մարտիկյան
3. «Հակամարտությունների կառավարում», Խաչատուր Բեգիրջյան, Նատալյա Մարտիրոսյան
4. Ազատություն ռադիոկայանի մասնագիտական էթիկական կոդեքսը
5. BBC-ի լրագրողի ուղեցույցը
6. «Թերթեր վարժության» հոդվածների օրինակներ
7. «Գլխավոր շտաբը հաղորդում է» վարժության համար անհրաժեշտ նյութը

Հավելված 5. Առաջարկվող օրակարգ

Օր առաջին

«Թշնամու կերպարը»

10:00-11:00 – Մաս առաջին

Ծրագրի, դասընթացի նպատակների և խնդիրների ներկայացում: Ծանոթություն:

11:00-12:00 – Մաս երկրորդ

Բացասական և դրական կարծրատիպեր

12:00 -12:30 – Սուրճի ընդմիջում

12:30 -14:30 – Մաս երրորդ

«Խաղաղության և պատերազմի միջև» ֆիլմի դիտում և քննարկում: Վարժություն խմբերում:

14:30 – 15:30 – Ճաշ

15:30 – 17:00 – Մաս չորրորդ

«Մուսուլմանի հետ նման բան չպիտի պատահեր» ֆիլմի դիտում, քննարկում:

Օր երկրորդ

«Հակամարտությունների լուսաբանում»

10:00-12:00 – Մաս առաջին

Վարժություն խմբերում: «Ուղղագրության կանոններ» ֆիլմի դիտում և քննարկում:

12:30 -13:00 – Սուրճի ընդմիջում

13:00 -15:00 – Մաս երկրորդ

Մտքերի գրոհ: կոնֆլիկտաբանություն: «Կամուրջ վադիի վրա» ֆիլմի դիտում և քննարկում:

15:00 – 16:00 – Ճաշ

16:00 – 17:30 – Մաս երրորդ

«Թշնամու կերպարը» ֆիլմի դիտում և քննարկում:

Օր երրորդ

«Մամուլի էթիկա»

10:00-11:30 – Մաս առաջին

Վարժություններ խմբերում: ներածություն լրագրողական էթիկայի մասին:

11:30- 12:00 – Սուրճ, թեյ

12:00-13:10 – Մաս երկրորդ

Էթիկայի կոդեքսի կազմում և ստորագրում:

13:10 – 14:30 – Ճաշ

14:30 -16:30 – Մաս երրորդ

16:30 – 17: 00 – Ամփոփում

Հավելված 6. Դասընթացի գնահատման թերթիկ

Խնդրում ենք, 5-ից 1 սանդղակով, որում 5-ն առավելագույն գնահատականն է, գնահատել դասընթացը՝ օղակով նշելով ձեր ընտրած թիվը: Ազատ զգացեք լրացուցիչ մեկնաբանություններ անել:

Հարց 1: Դասընթացն օգտակար եղավ՝ ծանոթանալու համար հակամարտությունների լուսաբանման սկզբունքներին:

Գնահատական՝	5	4	3	2	1
-------------	---	---	---	---	---

Մեկնաբանություն՝

Հարց 2: Ստացած տեղեկություններն օգտագործելու եմ իմ հետագա մասնագիտական աշխատանքում:

Գնահատական՝	5	4	3	2	1
-------------	---	---	---	---	---

Մեկնաբանություն՝

Հարց 3: Այսպիսի դասընթացներն օգտակար կլինեն այլ լրագրողների համար ևս:

Գնահատական՝	5	4	3	2	1
-------------	---	---	---	---	---

Մեկնաբանություն՝

Հարց 4: Դասընթացը հնարավորություն տվեց ծանոթանալու իմ գործընկերների հետ:

Գնահատական՝	5	4	3	2	1
-------------	---	---	---	---	---

Մեկնաբանություն՝

Հարց 5: Այլ մեկնաբանություններ՝

